

N855

Հայոց 2010  
Տեղական թիվ 20

Պեղական բարու լեռների միացել

ՊՐՈՖ. ԱՎ. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԿԱԹԱՏՈՒ ԿՈՎԻ  
ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

ԳՐԱԴԱՐԱՆ  
Института  
Восточно-Дальнего  
Востока Науки  
СССР

ՀՐԱՄԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

ՕԵՐԵՎԱՆ—1926

636.2

Բ-14

ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՍԻ  
29 AUG 2011 ԼՈՒՅՍ ԵՎ ՏԵՍԱՅ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Ս. Շագունց Մեր անհլիքները, (սպասված) . . . . . 20 կ.
2. Փիրումյան յեզ Ա. Մելքոնյան—ինչու ձեռնուու  
յի դորձարանում յուզ և շվեյց. պանիր պատրաստելը 3 »
3. Հ. Փիրումյան.—Խոտարույսերը և նրանց մակու-  
թյան յեղանակները . . . . . 10 »
4. Խ. Սվելիբեզյան.—Հ. Ա. Հ. Հողային. Որենու  
գիրքը, բացատրական հարց ու պատասխաններով.  
մասն տառջին, աշխատավորական հողօգտագործու-  
թյուն (սպասված) . . . . . 40 »
5. Պ. Հեթիմյան.—Թթեհնու մշտկությունը . . . . . 10 »
6. Պ. Հեթիմյան.—Շերամի վորզը, նրա կերակրելն ու  
ինսոմքը . . . . . 10 »
7. Կ. Մելիք Շահնազարյան.—Ծիախոսի մշտկությունը 20 »
8. Ս. Ֆրիգոլին.—Տասը պատգում անասնապահին(սպաս.) 20 »
9. Խ. Շերիցյան.—Անհատական թէ կոռպ. կաթնա-  
տնեառություն . . . . . 10 »
10. Հ. Հարուրյուն.—Բատրակ, կնքիր պայմանագիր  
(չափածո) . . . . . 5 »
11. Մ. Թումանյան.—Շարքացանքը և նրա նշանակու-  
թյունը . . . . . 15 »
12. Խ. Տեր-Մերսիոյան.—Ինչպես մշտկել խաղողի այ-  
ցիները (28 նկարով) . . . . . 35 »
13. «Տեսաներ զեպի զուզ»,—Անդրկովկասյան Յերե-  
րաժին Կոմիտեյի բանաձեռ զյուզացիական հարցի  
մասին, Ս. Շագունցի նախարարությունը . . . . . 15 »
14. Հայաստանի Կոմմունիստական Կուսակցության  
Կենտրոնական Կոմիտեի Շարուրք Պէնումի Բա-  
նահվեր . . . . . 15 »
15. Ա. Արմենյան.—Իրշար. յեղջյուրավոր անառունե-  
րի մանաժամքը . . . . . 15 »
16. Հ. Ազարյան.—Գյուղատնտեսական բանվորությունը  
և միջազգային կոմմանիստական շարժումը . . . . . 40 »
17. Դ. Խան-Ջոլյան.—Անգեղուցյ արդյունավետ խոզա-  
րություն . . . . . 15 »

~~4853~~  
~~Հաշ95~~

Պեղեարեներ բոլոր յերկների, միացե՛ք

№ 24 (27) «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ» № 24 (27)

636.2

Ք-14

ՊՐՈՖ. ԱԿ. Ա. ՔԱԼԱՆՅԱՐ

ԿԱՌՆԱՏՈՒ ԿՈՎԻ  
=ԿԵՐԱԿՐՈՒՄԸ=

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍԻՏՈՒ  
ԽՈՏՏՈԽԵԾՆԻ  
Ակադեմիա  
ԽՍՀՄ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏԻ

ՏԵՐԵՎ. Ա. 1926

ՅԵՐԿՈՒՆԻ ԽՈՍՔ

Այս գրքույկը հեղինակը նվիրում է հայ գյուղացուն։  
Մեր գյուղական տնտեսությունը դեռ նահապետական դրության մեջ և գտնվում յեվ չի կարող տալ այն արդյունքի բառորդ, գուցե յեվ տասերորդ մասը, վոր կարող կլիներ ստանալ Դանիայի, Բելգիայի կամ Շվեդիայի գյուղացին, յեթե նա ապրեր մեր յերկրում։

Ինչու մեր յերկրի կովը տարեկան հազիվ 30-40 փութ կաթ և տալիս, մինչդեռ ուրիշ յերկրներում տարվա կաթի քանակը հասնում է 200—400 փութի, իսկ Ամերիկայում նույնիսկ հասցընել են 1200—1300 փութի: Մի՞թե միայն տավարի ցեղն ե, վոր ստեղծել ե այդ տարրերությունը:

Իհարկ, ցեղն ել ունի յուր նշանակությունը. բայց ամենալավ ցեղի տավարն ել յեթե քերեք մեր գյուղը յեվ պահեք ու կերակրեք այնպես, ինչպես մեր կովերին ենք պահում ու կերակրում, նա յել շուտով կապակասեցնի կաթը, կցամաքի, ինքն ել կզարի, գուցե հիվանդանա ու սատկի. իսկ յեթե կենդանի յել մնա, նրանից ծնված հորթը կլինի անհամեմատ ավելի փոքր, թույլ կազմվածքով, իսկ թոռներն այնքան կմանրանան յեվ կազմվածքով այնքան կվատանան (կայլասերվեն), վոր կհասնեն մեր յերկրի տավարին ու նրա շափ կաթ կտան. Կաթի քանակը կիրից ե կախված. Ամենալավ կովն ել վատ կերակրելուց կապակասեցնի կաթը, իսկ հասարակ ցեղի կովը լավ կերակրելուց կավելացնի կաթը յեվ տիրոջ յափ արդուունը կտա:

Բայց առաւտ կերպիրել դեռ չի նշանակում խելացի կերպով յիշ արդյունավետ անասնապահություն ստեղծել: Պետք է իմանալ, թե յե՛րք, ի՞նչ տեսավիճ կեր գործ ածել, կերի ի՞նչավիսի խառնուրդներ վերցնել յիշ ի՞նչ ջնջով, վորապեսզի վորքան նեարավոր ե եժան լինի, կաթ շատ ստացվի յիշ յուղալի լինի ու ափրոցն եժան նստի:

Յեթե այս գրքումկը կարողանա ոգնել զլուզացուն կովի կերակրման յեվ առատ ու հժան կաթ ստանալու գործում, հիզնակն իր նպատակին հասած կիմնի:



59781-66

*Форм. № 400 л.*

*Shipwreck 5000.*

*Quint.* № 2788.

Տպագրական Տրիստի 2-րդ տպարան, Յերևան:

## 1

**ԻՆՉՈՐԻ ԺԻՇ ԿԱԹ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՆ ՏԱԼԻՍ  
ՄԵՐ ԿՈՎԵՐԸ**

Ամենքը գիտեն, վոր մեր կովերը քիչ կաթ են տալիս ու մեր անասնապահությունն ել վնասաբեր ե: Բոլորն ել գանգատվում են, վոր մեր կովերը վատ տեսակի յեն. բայց քչերն են իրենց հարց տալիս, թէ ինչու յեն մեր կովերը կաթնապակաս և անասնապահությունն ել վնասաբեր: Առանց յերկար մտածելու և այդ ցավալի յերեղույթի իսկական պատճառներն իմանալու, շատերն այդ հարցին պատասխանում են թե՝ «զե մեր կովերի ցեղը— ջինսը լավը չի, լավ տեսակի անասուններ պիտի պահել, իսկ լավերը պահելու համար ել փող չունենք»:

Բայց ճիշտ ե արդյոք այդ պատասխանը:

Հենց միայն ցեղը նշանակություն ունի: Միթե իսկապես մեր տեղական կովն այնքան անպետք ե, վոր նրանից վոչ մի ոգուտ չի կարելի ստանալ:

Իսկ ի՞նչ ոգուտ են տալիս մեզ — արտասահմանյան ցեղի կովերից կազմված, կամ արտասահմանյան ցուկերով ազնվացրած նախիրները:

Յեթե անասնապահն իրեն այս հարցերը տա ու տիկից ծանոթանա մեր իրականությանը, նա ամենից առաջ կտեսնի, վոր քիչ կաթ են ստանում վոչ միայն այն տնտեսություններում, վորոնց կթանները տեղական են, այլ և բազմաթիվ այնպիսի անտեսություններում, վորոնց կովերը կամ արտասահմանյան են, կամ «ազնվացրած» են արտասահմանյան ցուկերով: Առատ կաթ և արդյունավետ

անասնապահություն մենք գտնում ենք միայն հազվագյուտ ու լավ հիմքերի վրա դրված տնտեսություններում, և չզարմանաք, յեթե ասեմ, վոր այդ աշքի ընկնող տնտեսություններից շատերի տավարը կազմված և տեղական հասարակ կովերից:

Վորտեղ և գաղտնիքը:

Պարզ է, վոր մեր կովերի կաթի պակասության պատճառը միայն նրանց ցեղը չի, այլ և այն, վոր նրանց կերակրելու և խնամելու ձեզ չգիտենք:

Փորձը ցույց է տալիս, վոր հմտորեն կերակրելուց ու լավ խնամելուց, մեր տեղական կովերն ել բավարար կաթ են տալիս ու հաջողությամբ արդարացնում են կերի վրա արած ծախքը. իսկ ձմեռը վատ կերակրելուց, վատ գոմում պահելուց և ամառը համապատասխան արոտատեղ չունենալուց՝ արտասահմանյան ցեղի ամենալընտիր կովերն անդամ կորցնում են իրենց լավ հատկություններն ու այլասերվում:

Հասկանալի յե, վոր առանց կերն ավելացնելու առատ կաթ չի կարելի ստանալ. բայց դա բավական չի, պետք ել կերակրելու ձեն ել իմանալ:

Շատերը մտածում են, թե՝ «Ել կերակրելու ձեզ վորն ե, կեր լինի, ով ասես՝ կկերակրի»: Մեր այս զրուցում կտեսնենք, վոր այդպես մտածում են միայն նրանք, ովքեր չգիտեն, թե յերբ ինչպիսի կերի պահանջ են զգում կովերը և չեն կարողանում մի կերը մյուսից տարբերել թե վորն ե նրանցից սննդարարն ու կաթը շատացնողը:

Միենույն կթաններին միատեսակ կեր տալով՝ իր գործին հմուտ անտեսատերը կարող է անհամեմատ ավելի կաթ ստանալ, քան նա, վոր կերակրելու ձեզ չգիտե:

Ահա ձեզ մի որինակ. մոռասատանի Տվերի նահանգում, յերկու—Ա. և Բ. տնտեսություններում (Ա. տնտեսությունը կառավարում եր այս զբանագիր հեղինակը, իսկ մյուսը պատկանում եր հարևան Բ.-ին) մոռավորապես հավասար չափով տեղական կովերից բաղկացած նախիր կար

(30—40 գլուխ): Միենույն քանուկությամբ ել կեր եր գործադրվում, այն ե՛ ձմեռվա ընթացքում գլխին մոտ 100 փութ (1667 կիոզրամ) խոտ, 50 փութ գարնանացնի լավ դարման և 20—25 փութ թեփ, վարսակի ալյուր ու կտավատի քուսպ:

Քանի վոր թե՛ նախիրները, թե՛ կերը և թե՛ ամառվա արոտաեղերը յերկու անտեսության համար ել մոտավորապես նման ելին, պետք եր յենթադրել, վոր ստացած կաթն ել պետք և հավասար լիներ, սակայն տարբերությունը իրականում շատ մեծ եր: Ա. տնտեսության մեջ ամեն մի կովի տարեկան կաթը 175 զուլ եր (200 լիտր), իսկ Բ. տնտեսության մեջ միայն 80 դույլ (100 լիտր), հետեւապես կաթը Բ. տնտեսության վրա շատ ավելի թանգ եր նստում, քան առաջնի վրա\*):

Այդ տարբերությունը, ինչպես հետո կտեսնենք, առաջանում եր զանազան ձեռվ կերակրելուց:

Գործին հմուտ շվնելու պատճառով, մենք շատ անզամ կերը զոր վատնում ենք (ինչպես անում եր Բ. տընտեսատերը), կամ, շատ ավելի հաճախ, անտեղի կերպով ինայում ենք կերը յեվ զրկվում ավելի թանգարժեք կաթից:

Առաջին գեպքում մենք վնաս ենք կրում նրանով, վոր կերն անտեղի փշացնում ենք, յերկրորդ գեպքում ել նրանով, վոր ժամանակին կեր չտալու պատճառով, զըրկվում ենք կաթից, վոր շատ ավելի թանգ արժե, քան ինայած կերը:

Այժմ պարզենք, թե ինչպես պիտի հասկանալ, յերը առում ենք կանոնավոր ու հմտորեն կերակրել և թե ինչպես կարելի յե անել, վոր մեր կովերը շատ արդյունք տան:

\*) Այս գրքույկում հաշվիները բերված են նախապատերազմյան գներով, վորովհետև այժմյան գներն այնքան են փոփխական ու անկայուն զանազան ըջաններում, վոր նրանց վրա հենվել չի կարելի:

2.

**Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՎՈՐՈՇՈՒՄ, ՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԿԵՐԻ  
ՊԱՀԱՆՁ ՈՒՆԵՆ**

Ամեն մի անասուն ուտում, սնվում է, վորպեսզի ապրի ու բազմանա:

Զահել կենդանին սկզբում աճում է, մինչև վոր հասունանում է, այնուհետեւ կերը գնում է վնչ թե մարմնի աճելության, այլ նրան պահպանելու վրա: Յեթե հասակն առած կենդանու մարմինը չմաշվեր, նա իր գոյությունը պահպանելու համար կերի կարիք չեր ունենա—քիչ քանակությամբ կեր հարկավոր կլիներ, վորպեսզի մոր արգանդում պտուղը սնվեր ու մեծանար: Բայց կենդանու մարմինը շարունակաբար մաշվում է ու միևնույն ժամանակ վերանորոգվում: Մաշված մասերի փոխարեն արյան միջոցով կազմվում են նորերը:

Կենդանին ման է գալիս, շարժվում է, և ինչպես վոր շոգեմեքենան առանց վառելիքի չի կարող բանել այնպես ել կենդանին չի կարող շարժվել, յեթե ույժ և տաքություն առաջ բերելու համար նրա (կենդանու) մարմնի մի մասը չայրվի:

Բոլորս գիտենք, վոր կենդանին աշխատելես տաքանում ու նիհարում է. ուրիշ խոսքով՝ նրա մարմինը մաշվում է:

Ի հարկե, արյունը մարմնի մաշված մասերի փոխարեն իսկույն կազմում է նորերը, բայց վորովհետեւ ինքը՝ արյունն ել կերից ե առաջանում, այդ պատճառով վորպեսզի կենդանին չնիհարի, պետք ե նրա կերն ավելացնել,

և ամենքը գիտեն, վոր շատ շարժվող ու աշխատող կենդանիների համար շատ ել կեր ե պահանջվում:

Կենդանին իր գոյությունը պահպանելու համար ել տաքության կարիք ե զգում. նրա մարմինը դրսից աստիճանաբար սառչում է, և յեթե ներսն անընդհատ, տաքություն չառաջանար, այն գեղքում կենդանին կսառչեր ու շուտով կանշնչանար. բայց այդ տեղի չի ունենում դարձյալ այն պատճառով, վոր կենդանու մարմնի մեջ միշտ և անընդհատ այրում ե կատարվում, և տաքանում ե նրա որդանիզմը:

Ուրեմն, շարժումների, ման գալու և մարմինը տաքացնելու համար՝ կենդանին այրում ե իր արյան մի մասը. իսկ այդ կորցրած արյան փոխարենն ստանալու համար, վորոշ քանակության կերի պահանջ ե զգում: Բացի դրանից, կենդանու մազը թափվում է, կձղակները մաշվում, վորոնց նորոգման համար ել կեր ե գործադրվում: Ուրեմն, կենդանին վորոշ քանակությամբ կեր գործադրում ե միայն նրա համար, վոր՝ պահպանի իր գոյությունն ու մարմինն այնպես, ինչպես վոր կա:

Այն կերը, վոր բավականանում է կենդանուն միմիայն նրա գոյությունը պահպանելու համար, վորից կենդանին փոչ նիհարում է, փոչ գիրանում և փոչ ել կաթն ե տալիս՝ մենք անվանում ենք կենսաւահ կեր: Միջին մեծության գյուղական կովի գոյությունը պահպանելու համար պահանջվում է որական 15 ֆունտ իոտ և 10—12 ֆունտ դարման, հետեւապես դա յել կազմում ենրա կենսապահ կերը:

Ուրեմն, կենսապահ կերն անմբողջապես գործադրվում է կենդանու մեջ ույժ ու տաքություն առաջացնելու և մարմնի մաշվող մասերը վերականգնելու վրա, իսկ յեթե բացի դրանից, կենդանին կաթ ել պետք ե տա, ապա դրա համար ավելի կեր ե պահանջվում, վորովհետեւ կաթն ել նույն մարմնից ե առաջանում:

Վորքան շատ կաթ ե տալիս կովը, այնքան ավելի յե-

Նիհարում նա և նրան կուշտ պահելու համար ավելի կեր  
ե պահանջվում:

Ահա կերի այդ հավելումը, վոր անհրաժեշտ ե կաթ,  
այսինքն արդյունք ստանալու համար՝ կոչվում ե արդյունա-  
տառու կեր. և վորքան շատ կաթ ե տալիս կովը, այնքան  
ավելի հավելյալ կամ արդյունատու կեր պիտի տալ նրան:

Կթաններին կերակրելու ամբողջ հմտությունը հենց այն  
է, վոր ճշտությամբ վորոշվի, թե յերբ պիտի նրանց պա-  
հել միմիայն կենսապահ կերով, յերբ յեվ ի՞նչ չափով ա-  
գելացնել արդյունատու կերը, յեվ ինչից կազմել այդ կերը:

## 3.

**Ի՞նչ ՓՐՓՈԽՈՒԹՅՈՒՆ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ԿՈՎԻ ՄԵԶ  
ՆՐԱ ՑԱՄԱՔԱՌ ՅԵՎ ԿԱԲՆԱԾՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Յեթե մոտիկից ծանոթանալու լինենք կովի կյանքին,  
կտեսնենք, վոր վերջինս իրարից միանգամայն տարբեր-  
վող յերկու ժամանակաշրջանի յերաժամկետ—մինչև ծնե-  
լը և ծնելուց հետո:

Սինչեվ ծնելը, ցամաքած ժամանակ, յերբ կաթ չի  
տալիս, կովը կարիք ե զգում միմիայն իր գոյությունը  
պահպանելու կերի, այսինքն՝ կենսապահի կերի. բացի  
դրանից, նա կարիք ունի կերի մի փոքր հավելման՝ իր  
արգանգում մեծացող հորթուկին մնելու համար: Շատ  
հասկանալի յե, վոր բանի ծնելու ժամանակը մոտենում է,  
այնքան հորթը մոր արգանգում ավելի յե մեծանում և ել  
ավելի արյուն խլում իր մորից: Հետևապես աստիճանա-  
բար պիտի ավելացնել մեծացող հորթի բաժին կերը: Կեր-  
ջին որերին, յերբ կովը ծնելու յե, հորթին մնելու համար  
անհրաժեշտ ե մոտավորապես 1—2 ֆունտ թեփ, քուսպ  
վարսակ և այլ հաստիկային կեր: Ուրեմն, այդ ժամանակ  
կովին կարելի յե կերակրել խոտով ու դարձանով, հետը  
շաղախելով հորթի բաժին կերը, իսկ յեթե խոտը շատ լավ  
է ու առատ, կարելի յե բավականանալ միմիայն դրանով:

Յեթե կովին ցամաքած ժամանակ շատ կերակրենք՝  
նա կսկսի չափից դուրս գիրանալ, և դա հասկանալի յե—  
այս գեպքում կերը չի գործադրվում կաթ պատրաստելու  
վրա, այլ ամբողջովին գործադրվում ե կովի մարմնի վրա:  
Շատ կերակրելուց պետք ե խուսափել վորովիհուկ գիրացած

կովը նախ դժվար ե ծնում, և հետո շատ կերակրելը ձեռնոտու չե և կարիք ել չկա:

Ծնելուց հետո, կովի մարմինը կարծես միանգամայն կերպարանափոխվում ե: Նա այլևս չի գիրանում: Արյունը հոսում ե դեպի կուրծը, վորն սկսում ե զգալի կերպով մեծանալ և կաթ արտադրել: Կովն այժմ մայր ե. Նա պիտի իր հորթին կերակրի ու մեծացնի: Բնությունն ել այնպես ե հարմարեցրել բոլոր մայրերի որդանիքմը, վոր նրանք իրենց ձագերին կերակրեն վոչ միայն արգանդում, այլև ծնվելուց հետո:

Քանի դեռ հորթը մոր արգանդումն ե՝ մնվում ե ուղղակի մոր արյունով, վորը պորտապարանի միջոցով անցնում ե հորթի արյունատար յերակները: Այդ ժամանակ հորթը վոչ ուտում ե, վոչ ել մարսում, վորովհետև պատրաստի արյուն ե ստանում: Յերբ կովը նոր ե հղիացած և դեռ պտուղը փոքր ե, վերջնիս զարգացման համար միայն մի քանի կաթիլ արյուն ե պահանջվում մորից, վորքան պտուղը մեծանում ե, այնքան ավելի արյուն ե խլում իր մորից և, վերջապես, յերբ հորթը լույս աշխարհ ե գալիս ու պորտապարանը կտրվում ե մոր մարմից՝ նա սկսում ե սնվել իր բերանի միջոցով:

Ի՞նչ ե կատարվում այդ ժամանակ մոր հետ: Մենք արդեն տեսանք, վոր քանի մեծանում եր պտուղը, մայրն այնքան ավելի ու ավելի յեր արյուն ուղարկում դեպի իր մարմնի այն մասը, վորտեղ պտուղն եր գտնվում—այսինքն՝ արգանդը: Այժմ, յերբ պտուղն արգեն դուրս ե յեկել, ել կարիք չկա այրունն արգանդն ուղարկելու. բայց դըա փոխարեն մի նոր պարտականություն ե ընկնում մոր վրա—այն ե՝ տալ իր հորթուկին նույն արյունը, միայն առաջուց կաթ դարձնելով: Յեվ ահա այդ միջոցին կովի մեջ ահագին փոխիմություն ենք նկատում: Դեպի արգանդը տանող արյան ճանապարհը փակվում ե, բայց դըա փոխարեն, մինչ այդ դատարկ կուրծն սկսում ե ահագին քանակությամբ արյուն ստանալ: Կուրծը մեծանում ե, ուռչում ե սկսում ե դործել:

Մինչև ծնելը, կուրծն ընդունակ չեր արյունը կաթի վերածելու. առաջ կուրծն ստանում եր միայն այնքան արյուն, վորքան պետք եր իրեն սնվելու համար. իսկ այժմ նա ընդունակ ե դարձել կաթ արտադրելու, վորի համար հոսմ նյութ ե ծառայում մոր արյան մի զգալի մասը, վոր հոսում ե դեպի կուրծը: Մի խոսքով՝ վոնց վոր մի կաթի գործարան բացվի: Կըծի կաթ պատրաստելու ընդունակությունը չի սահմանափակվում այն քանակի կաթ արտադրելով, ինչքան վոր պետք ե հորթին՝ նոր ծնված ժամանակ:

Մայրը պարտավոր ե կերակրելու իր ձագուկին, մինչև վոր նա կարողանա ուրիշ կերով սնվել, և քանի վոր հորթն որ-որի վրա մեծանում ե՝ բնությունն ել մոր մարմնին ընդունակություն ե տվել 2—3 անգամ ավելի կաթ պատրաստելու, քան պետք ե հորթին նոր ծնված ժամանակի: Այդ միջոցին, կովի կաթ արտադրելու ընդունակությունն այնքան մեծ ե, վոր կենդանին կարծես ինքն-իրեն մոռացած՝ ջանք ե թափում, վորպեսզի ընդունած ամբողջ կերն իր ձագուկի համար կաթ դառնա:

Յեվ ճիշտ վոր, նոր ծնած կովին ինչքան ուղում ես կերակրի, չես կշապացնի: Քանի շատ ուտացնես՝ այնքան կաթը կավելացնի: Հետապայում, յերբ հորթը կողմնակի կերի սովորում ե, կովը կամաց-կամաց կաթը պակասեցնում ե, իսկ ավելի տված կերից նա այլևս կաթը չի ավելացնում, այլ սկսում ե դիրանալ:

Արդեն մենք ծանոթացանք մի կարևոր հանգամանքի հետ, վորից ամեն մի կովատեր պիտի ոգտվի՝ կերն արդյունավետ ձեռվ գործադրելու համար: Մենք գիտենք, վոր ծնելուց հետո կովին տված կերի մեծ մասը շահավետ կերպով գործադրվում ե կաթ արտադրելու վրա. յեվ ընդակառակն, ցամաքելուն մնտենալու ժամանակ, յերբ կուրծն աստիճանաբար դադարում ե գործել, տված ավելորդ կերից կովն անօգուտ զիրանում ե յեվ կաթ չի տալիս:

## 4.

## ԱԵՐԻ ԲՆՉ ՊԱՀԱՆՁ ՈՒՆԻ ԿՈՎԸ ԶԱՆԱՋԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Փորձը ցույց է տվել, վոր նոր ծնած կովն իր կենապահ կերի վրա ավելացրած մի ֆունտ սովորական ժարդախոտից պատրաստում է 1 ֆունտ, իսկ մի ֆունտ քուսալից՝ 3 ֆունտից ավելի կաթ։ Յեթե խոտի փութը հաշվելու լինենք 30 կոպեկ, իսկ քուսալինը՝ 80 կոպ.՝ խոտից ստացած կաթի փութը կնսակի 30 կ., իսկ քուսալից ստացածինը՝ 27 կ., վոր շատ ձեռնտու յե։ Կաթնատվության ըրջանի վերջերում կովը նույն 1 ֆունտ քուսալից 1 ֆունտ կաթ ել չի տալիս, վոր շատ թանգ է նստում տիրոջը։ Պարզ է ուրեմն, վոր նոր ծնած ժամանակ կովին պետք է լավ ու առատ կերակրել, իսկ ցամաքելու ըրջանում՝ ընդհակառակն, կերը տնտեսել։

Բայց այդպիս են անում արդյոք մեղանում։

Մեր տնտեսատեր գյուղացին ճիշտ դրա հակառակն է անում։ Աշնանը, յերբ տավարը սովորաբար ցամաքած է լինում ու ամառվա առատ արտօներից դիրացած, մեր գյուղացին սկսում է նըան լավ կերակրել իր նոր հավաքած խոտի ու դարմանի պաշարից։ իսկ գարնանը, յերբ կովերը ծնում են ու պահանջ զգում առատ կերի, մեր գյուղացին, խոտի պաշարը վերջացրած լինելու պատճառով, սկսում է նըանց կերակրել մարագի քունչ ու պուճախներից հավաքած դարմանի մնացորդներով։ Այս ձեռվ կերակրելուց, ի հարկե, առատ կաթ ել ստանալ չի կարելի, քանի վոր յերբ կովը կարող եր առատ կաթ, ուրեմն

և լավ ոգուտ տալ՝ կերի պաշարը վաղորոք անտեղի վատանած լինելու պատճառով—նրան սոված են սլահում, իսկ մենք գիտենք, վոր նոր ծնած կովն իր տիրոջն ոգուտ ետալիս նույնիսկ այն դեպքում, յերբ կերը գնվում եւ։

Կթաններին կերակրելիս չպիտի մոռանալ, վոր բավական չի միայն կերի առատ պաշար ունենալ, անհրաժեշտ են նաև գիտենալ, թե ինչպես պիտի ընտրություն կատարել կերի տեսակների մեջ, լսա նրանց վորակի, և ապա նայած կովին ու նրա կաթին՝ կերաբաժին կազմելիսկ գրա համար պետք ե ծանոթ լինել կերերի կազմության հետ և իմանալ, թե ինչպիսի կերի պահանջ ե զգում կովը կաթնատվության տարբեր ժամանակներում։

Գիտնականները հետազոտել են կերի զանազան աեսակներն ու գտել, թե ինչ բաղադրություն ունեն այդ կերերը, իսկ մյուս կողմից՝ նրանք գիտեն, թե ինչպես և սնվում կենդանին ու ինչպիսի սննդարար նյութերի կարիք ունի նա։

Բանից դուրս ե դալիս, վոր այն բոլոր կերակուրները, վորոնցով սնվում են մարդն ու կենդանին՝ ամենից առաջ պարունակում են սպիտակուց, այսինքն մի նյութ, վոր նման է ձվի սպիտակուցի կամ լոռի։ Բացի դրանից, կերակրի մեջ կա յուղ (որինակ՝ ճարպ, կոտավածի, կանեփի ճեթ և այլն), ովլա (որինակ՝ հացահատիկի և կարտոֆիլի մեջ) և շաքար (որինակ՝ բաղրուկի, գազարի մեջ)։ Յուղը, ովլան ու շաքարը միասին վերցրած՝ մենք անվանում ենք վոչսպիտակուցային նյութեր։ Այդ նյութերը, սովորաբար, մարմնի մեջ այրվում են և ույժ ու առաքություն առաջ բերում։ Վերջապես կերի, մանավանդ խոտի ու դարմանի մեջ կա նաև կոշտ փայտեղեն մաս—փայտանյութ, վորի շատ չնշին մասն է մարսվում։

Գիտնականների փորձերը ցույց են տվել, վոր կենդանիները չեն կարող սնվել միմիայն սպիտակուցային նյութերով (որինակ՝ լոռով), կամ միմիայն վոչսպիտակուցային նյութերով (որինակ՝ շաքարով, ճարպով, ովլա-

յով), այլ անհրաժեշտ և այդ յերկարի խառնութեամբ: Յեթե կովին կերակրենք այնպիսի կերով, վորի մեջ լինի միմիայն սպիտակուց, կամ միմիայն շաքար ու ուտ, այն դեպքում վորքան ել առատ կերակրենք, այնուամենայնիվ այդպիսի կովը չի ապրի, կճուծվի ու կսատկի. վորպեսզի նոր ծնած կովը կանոնափոր մնիվ, անհրաժեշտ ե, վոր նրա կերը պարունակի 1 մաս սպիտակուց և 5 մաս վոչ-սպիտակուցային նյութեր: Նոր ծնած կովը միայն այդպիսի կերը կարող է լավ մարսել ու կաթ պատրաստել. իսկ յեթե կերի մեջ լինի, որինակ՝ փոխանակ 5-ի, 7 մաս վոչ-սպիտակուցային նյութեր՝ այն դեպքում ավելորդ 2 մասը չի մարսվի, այլ աղիքներով, առանց ոգտագործելու, կանցնի ու աղք կդառնա:

Դրա հակառակը, յեթե կերաբաժինն այնպես կազմենք, վոր սպիտակուցը պետք յեղած չափից ավելի լինի, դարձյալ այդ ավելը չի մարսվի ու անտեղի կկորչի:

Ուրեմն՝ կերի մի բաղկացուցիչ մասը (սպիտակուցը), առանց համապատասխան չափով մյուս մասի (վոչ-սպիտակուցային նյութեր), ամբողջովին չի կարող մարսվել: Այստեղ կարելի յեր կերը համեմատել վասորի հետ: Վասոր պատրաստելու համար պետք է վերցնել մի մասալ ծծումք, մի մասալ մանրած ածուխ և 6 մասալ բորսկ (սելիտրա): Այդ խառնութեամբ շուտ բանկում ե և առանց մնացորդի այրվում, իսկ յեթե հիշալ բաղկացուցիչ մասերից վորեն մեկը վերցնենք ավելի կամ պակաս չափով՝ այն դեպքում վասորը վատ կրոնկվի և վասովելուց հետո մնացորդ կտա: Ինչպես վոր վասորի բաղկացուցիչ մասերը, չնայած՝ առանձին-առանձին վերցրած բոլորն ել վասորը, չնայած՝ առանձին-առանձին վերցրած բոլորն ել վոր նյութեր են, բայց մեկն առանց մյուսների և այն ել ճիշտ չվորոշված խառնութեամբ, հարկ յեղած ուժով չի բուժնիվ, այսպես ել կերակրութեամբ նրա յուրաքանչյուր բաղկացուցիչ մասն անհրաժեշտ և սննդի համար, այնուամենայնիվ, մեկն առանց մյուսի և այն ել ճիշտ չկազմված խառնութեամբ՝ չի կարող մարսվել:

Այդ յերկույթը մենք հետեւյալ ձեռվ կարող ենք պատկերացնել: Յեթե նոր ծնած կովի համար ճիշտ կազմած որական կերաբաժինը նկարենք քառանկյունու ձեռվ (նկար 1)



Նկար 1.

նշանակված (Ա) տառով), վոչ-սպիտակուցային նյութերը 5 անգամ ավելի կլինեն (նկարած և հորիզոնական գծերով և նշանակված և «Վ» տառը), այսինքն՝ 10 ֆունտ: Այդ ձեռվ կազմված կերաբաժինը կլինի կանոնավոր, ամբողջապես կմարսվի և ամենաբարձր քանակով կաթ կարաղրի:


Այժմ յենթադրենք, թե կերաբաժնում պակասում է սպիտակուցի  $\frac{1}{4}$ -ը, այսինքն՝  $\frac{1}{2}$  ֆունտ. այդ դեպքում, վոչ-սպիտակուցային նյութերից, դրան համապատասխան չափով, այսինքն 5 անգամ ավելի, ուրեմն  $2\frac{1}{2}$  ֆունտը չի մարսվի, այլ աղքի հետ կխառնվի ու անոգուտ կկորչի, ինչպես ցույց է տրված  $2\text{-րդ}$  նկարում:



Նկար 2.

Իսկ յեթե ընդհակառակն, պակասեցին  $2\frac{1}{2}$  ֆունտ վոչ-սպիտակուցային նյութեր, այն դեպքում սպիտակուցից չեր մարսվի  $\frac{1}{2}$  ֆունտ, այսինքն՝ պակասած վոչ-սպիտակուցային նյութերից ( $2\frac{1}{2}$  ֆ.) 5 անգամ պակաս: Այդ յերեւյթը շատ կարենոր նշանակություն ունի վոչ միայն դիտության, այլ և ամեն մի դորձնական անասնապահի համար:

Յենթադրենք թե՝ նոր ծնած կովին տվել ենք 25 ֆունտ միջին տեսակի մարգախոտ և 10 ֆունտ գարման, ընդհանենը 35 ֆունտական մեջ այդ կովին, ըստ



իր կաթնատվության, անհրաժեշտ ե, վոր կերը պարունակի 1<sup>1/2</sup> ֆունտ սպիտակուցային և 5 անգամ շատ, այսինքն՝ 7<sup>1/2</sup> ֆունտ վոչ սպիտակուցային նյութեր--բոլորը միասին՝ 9 ֆունտ սննդանյութեր։ Մեր աված 35 ֆունտ կերը պարունակում ե 1<sup>1/2</sup> ֆ. սպիտակուց և 10 ֆ. վոչ-սպիտակուցային նյութեր—ընդամենը 11<sup>1/2</sup> սննդանյութեր։ Մնացած 23<sup>1/2</sup> ֆունտը կլինի կոշտ ու անմարս փայտանյութ։ Ուրեմն՝ ամեն մի 3 ֆունտ կերից ստացվում ե 1 ֆունտ սննդարար նյութեր։

Առաջին հայացքից թվում ե, թե պահանջածից 2<sup>1/2</sup> ֆ. ավելի սննդարար նյութեր(կամ 7<sup>1/2</sup> ֆ. ավելի կեր)տալով կովին՝ նա պիտի ավելի լավ մնվի ու կաթը շատացնի, բայց իսկապես այդպես չի լինում այն պարզ պատճառով, վոր թեև ճիշտ ե՝ մենք 2<sup>1/2</sup> ֆունտով ավելի մննդարար նյութեր տվինք կովին, բայց այդ ավելցուկը միևնույն ե, չի մարսվում, կովին, բայց այդ ավելցուկը միևնույն ե, չի մարսվում, վորովհետև բաղկացած ե միմիայն վոչ-սպիտակուցային նյութերից։ Այդ 2<sup>1/2</sup> ֆունտ վոչ-սպիտակուցային նյութերը մարսելու համար պահանջվում ե 1<sup>1/2</sup> ֆունտ սպիտակուցամասը տրված կերի մեջ չկա։ Ուրեմն, 11<sup>1/2</sup> ֆ. սննդարար նյութերից 2<sup>1/2</sup> ֆ., այսինքն՝ ամբողջ կերի 1/5-ից ավելին, կորչում ե թե կովի, և թե տիրոջ համար կերի այդ զգալի մասը, այսինքն՝ 7<sup>1/2</sup> ֆ. խոտն ու դարձանը չկորցնելու համար կամ պետք ե կերաբաժնից հանենք (յեթե կովը ուժեղ սննդի կարիք չունի), կամ ավելացնենք վորոշ քանակությամբ այնպիսի կեր, վորը պարունակի իր մեջ 1/2 ֆունտ սպիտակուց (այսինքն՝ ավելորդ 2<sup>1/2</sup> ֆունտ վոչ-սպիտակուցային նյութերի 1/5-ը)։

Յեթե մենք այդ կերաբաժնին ավելացնենք, որինակ՝ 2 ֆունտ կտավատի կամ արեածաղկի քուսալ, վորի մեջ կա հենց ուղիղ 1/2 ֆունտ սպիտակուց, կմարսվի նաև կերի այն մասը (7<sup>1/2</sup> ֆունտ խոտ ու դարման), վորն առաջ անոգուտ կորչում եր։

Սրանից պետք ե յեզրակացնել, վոր կերը հմտորեն ավելացնելով, կարելի յե ձեռնոտու կերպով այն անտեսել:

## 5

### ԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏ ՆՐԱՆՑ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍՆՆԴԿՐԱՐՈՒԹՅԱՆ

Նոր ծնած կովը կաթ արտադրելու համար շատ սպիտակուց ե պահանջում, իսկ այնուհետև կաթը պակասելու հետ՝ աստիճանաբար սպիտակուցի պահանջն ել պակասում ե. վորովհետև այն կերերն են թանդարժեք, վորոնց մեջ շատ սպիտակուց կա, այդ պատճառով կովատերը պետք ե իմանա, թե ինչ առանձնահատկություն ունի այս կամ այն կերը, վորպեսզի այդ կերը գործադրի տեղին ու նպատակահարմար ձևով։

Սպիտակուց պարունակելու տեսակետից ամենաաղքատ կերը գարմանն ե, վորի մեջ սպիտակուցը 20-25 անգամ պակաս ե վոչ-սպիտակուցային նյութերից. դարմանի մեջ մեծ մասը փայտանյութ ե։

Լավ մարդաբանություն շատ ավելի սպիտակուց ե պարունակում (5-6 անգամ պակաս վոչ-սպիտակուցային նյութերից). սպիտակուցային նյութերով ավելի հարուստ են ցանովի առվույտը (մի մաս սպիտակուցին զալիս ե 3-4 մաս սննդարար այլնյութեր), բայց դրանից անհամեմատ ավելի մննդարար են՝ հատիկեղենը, սերմերը, թեփը, քուսալը (ողու և գարեջը քամածի մնացորդը), վորոնց միջի փայտանյութը բիչ ե, սննդարար նյութերը՝ շատ, իսկ գրանցից մի քանիսը (որինակ՝ քուսալը) պարունակում են մեծ քանակությամբ սպիտակուց։

Յերեկի կմտածեք, թե՝ ավելորդ չի արդյոք կերի բաղադրության մասին այսքան խոսելը, թե՝ վործնա-

կան տնտեսատերն ինչպես կարող ե իմանալ ամեն մի կերի բաղադրությունն ու հատկությունը։ Ամենից առաջ ենքան ել դժվար չե կերերի բաղադրությունն իմանալ ինչքան թվում ե, վորովհետեւ բոլոր կերերը հետազոտված են և կան պատրաստի աղյուսակներ, վորոնցով հեշտությամբ կարելի յե իմանալ ամեն մի կերի բաղադրությունը։ յերկրորդ՝ բոլոր ասածներս կարենոր ե դիտենալ վոչ թե ամեն անգամ կերի բաղադրությունը վորոշելու, այլ կերերն իրարից տարբերելու և ճանաչելու գործը թեթևացնելու համար. իսկ գործնականում ճիշտ կերաբաժին կազմելու համար կան ավելի հասարակ միջոցներ։

Բոլոր կերերը մենք բաժանում ենք մի քանի տեսակների և իրարից տարբերում՝ ըստ նրանց սննդաբարության։ Այն կերերը, վորոնց մեջ շատ փայտանյութ կա ու թեև շատ տեղ են բնառում, բայց քիչ սննդաբար նյութեր պարունակում՝ անվանում ենք կոշոր, մնձածավալ կերեր. արանց մեջ են մտնում խոռոշ, գարմանը, կը-ճեպը . . . Մյուս կերերը, ընդհակառակն, սննդաբար նյութերով հարուստ են, քիչ տեղ են բռնում և քիչ փայտանյութ պարունակում։ Դրանք ամենաարժեքավոր կերերն են և վորովհետեւ ուժեղացնում են անասունների սննդապը՝ անվանում ենք ոտեղի կերեր. սրանց մեջ են մտնում բոլոր տեսակի հացահատիկներից կազմած կերերը— ալյուրը, թեփը, բուսպը, ածիկը, գարեջը քամփածքի չորացրած մնացորդը, հացի կտորները և այլն։

Հյութալի կերերն ել շատ ոգտավետ են, ինչպես որինակ՝ կանաչ խոտը, կարտոֆիլը, ճակնդեղը, գազարը, շաղկամը և այլն։ Այս կերերն առանձնապես արժեքավոր են կթի անասունների համար, վորովհետեւ թարմացնում են ձմեռվա չոր կերը և կաթին ու յուղին ամառվա մըթերքների հաճելի հատկությունները տալիս։

Բացի զրանից, կանաչ կերի սննդաբար նյութերն ավելի լավ են մարսվում, քան նույն կերինը՝ չորացրած ձևով։ Վերոհիշյալներից բացի, կան նաև ջրալի կերեր,

ինչպես որինակ՝ չանչը, ջրալի կոպտոնը, գարեջը դիրտը և այլն։ Այդ կերերն առանձին բարձր հատկություններ չունեն, բայց կոպիտ ու չոր կերերի հետ խառնած՝ ահազին ոգուտ են տալիս տնտեսությանը։

Գիտնականներն այդ բոլոր կերերը հետազոտել են ու վորոշել նրանց միջի սննդաբար նյութերի քանակը։ Ներքեսում բերված աղյուսակը ցույց է տալիս, թե ամեն մի կերի մեջ վորքան սպիտակուցային և վոչ-սպիտակուցային սննդաբար նյութեր կան։

Բայց կերի մեջ սննդաբար նյութեր լինելը բավական չի, պեաք ե, վոր նրանք դյուրամարս ել լինեն. որինակ՝ սննդաբար նյութեր կան և կաթի, և քուսպի, և սունկերի մեջ. սակայն կաթի մեջ յեղած նյութերն ամբողջապես մարսվում են, քուսպի միջինը մասամբ անմարս են մնում, իսկ սունկի միջի նյութերի մարսական մասն ավելի պակաս ե, դըս համար ել աղյուսակում ցույց է տրված միայն մարսական սննդաբար նյութերի քանակը։ (Աղյուսակը տե՛ս 22, 23, 24 և 25 յերեսներում)։

## ԿԵՐԵՒԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ԳԵՂՄՈՒԴ ԱՆՈՒՆ	1 Քոնհար մեջ			2 Քոնհար մեջ			5 Քոնհար մեջ			10 Քոնհար մեջ			20 Քոնհար մեջ		
	Ճղբմրտչ ովկուլու	Բասկտա -վիոռ-չուր	Բասկտավինը	Ճղբմրտչ ովկուլու	Բասկտա -վիոռ-չուր	Բասկտավինը	Ճղբմրտչ ովկուլու	Բասկտա -վիոռ-չուր	Բասկտավինը	Ճղբմրտչ ովկուլու	Բասկտա -վիոռ-չուր	Ճղբմրտչ ովկուլու	Բասկտա -վիոռ-չուր	Ճղբմրտչ ովկուլու	
<b>1. Խառնաչ կերեր</b>															
1 Արտաստեղիկ խռա, ճիշտակ հատության	0,02	0,09	0,11	0,03	0,19	0,22	0,08	0,47	0,55	0,17	0,94	1,11	0,34	1,88	2,22
2 Ցերեքնուկ ծարդակ ժամանակ	0,02	0,08	0,10	0,03	0,16	0,19	0,08	0,40	0,48	0,17	0,80	0,97	0,34	1,60	1,94
3 Սալույտ ծարկած ժամանակ	0,02	0,07	0,08	0,03	0,14	0,17	0,08	0,34	0,42	0,15	0,69	0,84	0,30	1,38	1,68
4 Վիլի ծարկած ժամանակ	0,01	0,06	0,07	0,03	0,12	0,15	0,07	0,30	0,37	0,14	0,61	0,75	0,28	1,22	1,50
5 Ցեղի լուսագործ կանաչ ժամանակ	0,01	0,08	0,09	0,01	0,17	0,18	0,03	0,42	0,45	0,06	0,85	0,91	0,12	1,70	1,82
6 Կարստովիլի անելիուց առաջ առաջ	0,01	0,06	0,07	0,01	0,13	0,14	0,03	0,32	0,45	0,06	0,65	0,71	0,12	1,30	1,42
7 Ելերի հանդիպելու առելիու	0,01	0,04	0,05	0,02	0,09	0,11	0,05	0,21	0,26	0,10	0,43	0,53	0,20	1,86	1,06
8 Շաքըրի հանդիպելու առելիու	0,01	0,07	0,08	0,03	0,14	0,16	0,07	0,34	0,41	0,14	0,68	0,82	0,28	1,36	1,64
<b>2. Թթվակցած կերեր</b>															
9 Թթվակցած իւրա տեղունակի	0,01	0,07	0,08	0,02	0,14	0,16	0,04	0,35	0,39	0,09	0,70	0,79	0,18	1,40	1,58
10 Թթվակցած տեղունակի	0,01	0,07	0,08	0,02	0,14	0,16	0,03	0,36	0,39	0,07	0,70	0,79	0,14	1,44	1,58
<b>3. Զոր զիստա</b>															
11 Մարդաբան վասակի	0,02	0,15	0,19	0,05	0,33	0,38	0,12	0,82	0,94	0,25	1,64	1,89	0,50	3,28	3,78
12 Ժիշին արդին	0,03	0,21	0,24	0,06	0,41	0,47	0,16	1,02	1,18	0,32	2,02	2,37	0,64	4,10	4,74
13 Համար լունդ	0,05	0,31	0,36	0,10	0,62	0,72	0,25	1,56	1,81	0,50	3,12	3,62	1,00	6,24	7,24
14 Խոն անսարի	0,04	0,30	0,34	0,08	0,59	0,67	0,20	1,48	1,68	0,41	2,63	3,37	0,82	5,92	6,74
15 Հանձային	0,03	0,18	0,21	0,06	0,36	0,42	0,15	0,89	1,04	0,30	1,79	2,09	0,60	3,58	4,18
16 Կալմարի յիշի զննություններ	0,04	0,24	0,28	0,08	0,48	0,56	0,22	1,20	1,42	0,45	2,40	2,85	0,90	4,80	5,70
17 Հապալաւանակություններ	0,06	0,16	0,22	0,12	0,33	0,45	0,31	0,81	1,12	0,62	1,62	2,24	1,24	3,24	4,48
18 Վիկի հնձային ծառակածամաննակ	0,07	0,20	0,27	0,13	0,40	0,53	0,33	1,01	1,34	0,66	2,03	2,69	1,32	4,06	5,30

ԳԵՂՄՈՒԴ ԱՆՈՒՆ	4. Գեղման			5. Գեղման մեջանակ			6. Արևանապատճեններ										
	19 Գարուս դաշտակ	20 Վարսակի	21 Աշտրակի	22 Ցողունի	23 Մեկու գարուս դաշտակ	24 Վարսակի	25 Կորսեկի	26 աշուրակի	27 Փանուկ դաշտակին	28 սիսակի	29 Մոկու ցողունի	30 Մոկու ցողունի	31 Կարտոֆիլի միջնա տեսակի	32 յուրա տարած	33 Պազար	34 Կերի հանդիպելու միջնա	35 Շաքարի ծառակածամաննակ
<b>4. Գեղման</b>																	
19 Գարուս դաշտակ	0,01	0,18	0,19	0,01	0,31	0,38	0,03	0,92	0,95	0,06	1,84	1,90	0,12	3,68	3,68		
20 Վարսակի	0,01	0,16	0,17	0,02	0,32	0,34	0,05	0,80	0,85	0,10	1,60	1,70	0,20	3,20	3,20		
21 Աշտրակի	0,01	0,11	0,11	0,01	0,20	0,21	0,02	0,51	0,53	0,04	1,02	1,06	0,08	2,04	2,12		
22 Ցողունի	0,11	0,11	—	0,22	—	0,55	0,55	—	1,05	1,09	—	2,18	2,18	—	—		
<b>5. Գեղման մեջանակ</b>																	
23 Մեկու գարուս դաշտակ	0,01	0,23	0,24	0,01	0,48	0,49	0,03	1,10	1,22	0,05	2,40	2,45	0,10	4,80	4,90		
24 Վարսակի	0,01	0,18	0,19	0,02	0,37	0,39	0,06	0,91	0,97	0,12	1,82	1,94	0,24	3,64	3,88		
25 Կորսեկի	0,01	0,18	0,19	0,02	0,37	0,39	0,06	0,91	0,97	0,12	1,82	1,94	0,24	3,64	3,88		
26 աշուրակի	0,01	0,21	0,22	0,01	0,43	0,44	0,03	1,07	1,12	0,07	2,13	2,20	0,14	4,26	4,40		
27 Փանուկ դաշտակին	0,04	0,18	0,22	0,08	0,36	0,44	0,20	0,89	1,05	0,40	1,78	2,18	0,80	3,56	4,36		
28 սիսակի	0,04	0,16	0,20	0,07	0,33	0,40	0,18	0,82	1,00	0,37	1,64	2,01	0,74	3,26	4,02		
29 Մոկու ցողունի	0,08	0,22	0,30	0,17	0,44	0,61	0,41	1,10	1,51	0,83	2,20	3,03	1,66	4,40	6,06		
30 Մոկու ցողունի	0,01	0,23	0,24	0,02	0,47	0,49	0,05	1,16	1,21	0,09	2,34	2,43	0,18	2,68	4,86		
<b>6. Արևանապատճեններ</b>																	
31 Կարտոֆիլի միջնա տեսակի	—	0,19	0,19	—	0,38	0,38	—	0,95	0,95	0,01	1,89	1,90	0,02	3,78	3,80		
32 յուրա տարած	—	0,31	0,31	—	0,63	0,63	0,01	1,56	1,57	0,02	3,13	3,15	0,04	6,26	6,30		
33 Պազար	—	0,09	0,09	0,01	0,16	0,17	0,02	0,41	0,43	0,04	0,83	0,87	0,08	1,66	1,74		
34 Կերի հանդիպելու միջնա	—	0,06	0,06	—	0,13	0,13	0,01	0,31	0,31	0,01	0,62	0,63	0,02	1,24	1,26		
35 Շաքարի ծառակածամաննակ	—	0,16	0,16	0,01	0,31	0,32	0,02	0,79	0,79	0,03	1,55	1,58	0,06	3,10	3,16		
36 կերի շառակած	—	0,05	0,05	0,01	0,09	0,10	0,02	0,22	0,24	0,03	0,45	0,48	0,06	0,90	0,96		

ԿԵՐԵՒՄ ԲԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՁՈՒՄԱԿ

24

ԿԵՐԵՒՄ ԱՆԻՆՆԵՐԸ

Գիծող առող	Համար	1 ֆունտի մեջ			2 ֆունտի մեջ			5 ֆունտի մեջ			10 ֆունտի մեջ			20 ֆունտի մեջ			
		մգրված պահանջ մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մգրված պահանջ մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մգրված պահանջ մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մգրված պահանջ մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մգրված պահանջ մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ	մակարդակ -վեռաշխատ -վեռաշխատ			
<b>7. Հասկելիքը ձեզ սերմարտ</b>																	
37	Քարի միջակ	0,060	66,0	72,0	0,12	1,32	1,44	0,30	3,30	3,60	0,61	6,59	7,20	1,22	13,18	14,40	
38	Կերպարկ	0,080	60,0	68,0	0,16	1,20	1,36	0,40	3,40	3,80	0,80	5,99	6,73	1,60	11,98	13,50	
39	Վարսակ	0,070	53,0	60,0	0,14	1,05	1,19	0,36	2,62	2,98	0,72	5,25	5,97	1,44	10,50	11,94	
40	Կորեկտ	0,070	53,0	60,0	0,14	1,05	1,19	0,36	2,62	2,98	0,72	5,25	5,97	1,44	10,50	11,94	
41	Ցեղականացրություն (սեմինուր) միջակ	0,070	75,0	82,0	0,13	1,50	1,63	0,33	3,33	3,74	0,70	6,67	4,98	1,15	3,24	14,98	16,30
42	Աշուբա	0,110	55,0	66,0	0,23	1,09	1,32	0,56	2,73	3,29	1,13	5,46	6,58	2,26	10,90	13,16	
43	Ցարենա	0,110	55,0	66,0	0,23	1,09	1,32	0,56	2,73	3,29	1,13	5,46	6,58	2,26	10,90	13,16	
44	Լորի բանալին	0,190	48,0	67,0	0,39	0,94	1,33	0,96	2,37	3,31	1,93	4,73	6,36	3,86	9,46	13,32	
45	Սիսառ	0,190	52,0	69,0	0,34	1,03	1,37	0,84	2,59	3,43	1,69	5,17	6,86	3,38	10,34	13,72	
46	Վասար	0,190	50,0	69,0	0,38	1,01	1,39	0,95	2,52	3,47	1,91	5,04	6,95	3,82	10,08	13,90	
47	Վիզի	0,200	50,0	70,0	0,40	0,99	1,39	1,00	2,48	3,48	2,00	4,97	6,94	4,00	9,94	13,94	
48	Կատալանի սերմարտ	0,181	0,1	1,19	0,36	2,02	2,38	0,90	6,96	6,96	1,81	10,11	11,92	3,62	20,22	23,84	
49	Հնդկացրություն (թթուխա)	0,080	45,0	53,0	0,15	0,90	1,05	0,37	2,63	2,63	0,75	4,52	5,27	1,50	9,04	10,54	
50	Փերի առշաբարձություն	0,110	36,0	47,0	0,22	0,72	0,94	0,54	1,41	1,80	2,34	1,11	6,14	6,92	1,16	7,22	9,38
51	Տարեկանի մանղու	0,110	37,0	48,0	0,22	0,74	0,96	0,55	1,85	2,40	1,11	7,0	4,81	2,22	7,40	9,62	
52	Տարեկանի մանղու	0,090	34,0	43,0	0,18	0,67	0,86	0,45	1,68	2,13	0,91	3,35	4,62	1,82	6,70	8,52	
53	Կարտոֆիլի չափանիկ	—	0,090	0,09	—	0,19	0,19	—	0,47	0,47	—	0,94	0,94	—	1,88	1,88	
54	Մասացորտ—լոլիկաքնձոր քաշելուց բարձրացրություն	—	0,050	0,050	0,010	0,090	0,100	0,020	0,23	0,25	0,030	0,47	0,50	0,06	0,94	1,00	
55	Համարական շաբաթական քաշություն	0,010	10,0	11,0	0,010	20,0	21,0	0,030	50,0	53,0	0,061	1,06	0,12	2,00	2,12	2,12	
56	Կուլյու չորացրած (ցամաք քուսուց)	0,040	48,0	52,0	0,070	0,971,040	18,2	0,412,59,0	36,4	83,5	19,0	72	9,66	10,38	9,66	10,38	

57	Քարի լուրի ոհորություն	0,030	10,0	13,0	0,070	18,0	25,0	0,170	46,0	63,0	0,350	0,921	1,270	0,70	1,84	2,54
58	Ածիք, ածիք	0,140	36,0	50,0	0,28	0,73	1,010	0,70	1,81	2,12	0,51	4,13	6,25	0,82	7,24	10,06
59	Կարտոֆիլի միջակ սպառ, սպառ հաղու	0,010	0,020	0,030	0,010	0,040	0,050	0,030	0,100	0,130	0,050	0,210	0,260	0,10	0,42	0,52
60	Ցեղականացրություն	0,010	0,010	0,040	0,050	0,020	0,040	0,030	0,090	0,110	0,050	0,220	0,270	0,110	0,44	0,52
61	Աշուբա	0,010	0,010	0,040	0,050	0,020	0,080	0,100	0,050	0,140	0,240	0,090	0,390	0,480	0,18	0,78
62	Աձինություն աշուբարձություն (օչոջական)	0,110	28,0	39,0	0,23	0,54	0,77	0,57	1,36	1,93	1,14	2,73	3,87	2,28	5,46	7,74
63	Քուազի լուսականի աշուբարձություն	0,030	46,0	49,0	0,450	0,530	0,981	1,131	3,32	4,45	2,62	6,4	9,04	5,52	5,28	9,80
64	Քուազի աշուբարձություն	0,270	45,0	72,0	0,540	0,901	1,441	1,362	2,33	3,59	2,72	4,46	7,18	5,44	8,93	14,36
65	Աշուբա ձարձություն	0,300	38,0	68,0	0,610	75,1	1,361	1,521	2,883	3,403	3,76	6,81	6,10	7,32	13,62	13,62
66	Մարմարի ամպուլ	0,640	26,0	90,1	1,270	53,1	80,3	18,1	31,4	49,6	36,2	63,8	9,912,72	5,171,79	2,28	2,94
67	Կարպի լուրի ամպուլ	0,030	12,0	15,0	0,070	23,0	30,0	16,0	57,0	73,0	33,1	14,1	47,0	0,66	2,28	2,94
68	Ժարենի քաշականի ամպուլ	0,040	0,050	0,090	0,080	0,100	0,180	0,190	0,260	0,450	0,380	0,520	0,900	0,76	1,04	1,80
69	Ակացիականի ամպուլ	0,040	0,040	0,080	0,080	0,160	0,190	0,190	0,380	0,380	0,380	0,76	0,76	1,52	1,52	1,52
70	Թթակ	0,040	0,051	0,060	0,020	0,110	0,130	0,040	0,280	0,320	0,090	0,550	0,640	1,08	1,08	1,84
71	Շիճուկ քաշականի ամպուլ	0,010	0,040	0,050	0,020	0,080	0,100	0,050	0,200	0,250	0,090	0,500	0,410	0,500	0,18	1,04
72	Բիթուկ	0,010	0,040	0,050	0,020	0,080	0,100	0,050	0,200	0,250	0,090	0,500	0,410	0,500	0,18	0,82

25

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ Ի՞ՆՉՊԵՍ ԳՆԱԿԱՏԵԼ ԿԵՐԵՐԸ ԸՍՏ ՆՐԱՆՑ ՍՆՆԴԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ

Բերված աղյուսակից յերեսում ե, զոր կերերն իրարից տարբեր սննդարարություն ունեն և միևնույնը չե, թե վոր կերը վորով կփոխարինվի։ Գործնականում ինչպես տարբերել կերերն իրարից և ինչպես ընտրություն կատարել նրաց մեջ։

Ի հարկե, ով կերերի բաղադրության աղյուսակն ունի և կարողանում է նրանից ոգտվել՝ հեշտությամբ կարող ե վորոշել ամեն մեկի սննդարարական արժեքը։ բայց դրանով, սովորաբար, մասնագետներն են ոգտվում, գործնակում կերաբաժինները կազմում են, կամ ըստ այսպես կոչված՝ «կերի միավորների» և դանիական չափերի, կամ պրոֆ. Ռ. կեների, ավելի զիտական, ռուլային համարժեք»-ի համաձայն։ Պարզենք դրանց իմաստը։

Ուլային համարժեքները։ Բոլոր կերերի սննդարարական ույժը, գերմանական զիտական Ռ. կեները համեմատել ե մաքուր ուլայի հետ։ Յերկարամյա փորձերից ու հետազոտություններից հետո, նա մի աղյուսակ կազմեց, վորում ցույց ե տված, թե ինչ քանակության ուլայի յե համապատասխանում (ըստ մասնդարարության ույժի) յուրաքանչյուր կերի 100 ֆունտը։ Որինակ՝ 100 ֆունտ վարսակի մասնդարարության ույժը համապատասխանում ե 60 ֆունտ ուլայի ույժին։ միջին հատկության 100 ֆունտ չոր խոտը հավասար ե 24 ֆունտ ուլային, 100 ֆունտ արևածաղկի քուսպը հավասար ե 68 ֆունտ

ուլային և այլն։ Ահա այդ թվերը (60-ը վարսակի համար, 24-ը չոր մարդախոտի և 68-ը արածաղկի քուսպի համար) կեներն անվանել ե «Ուլային համարժեք», այսինքն՝ ուլային հավասար ույժ ունեցողներ։

Կերը բերած աղյուսակի (Եջ 22.25) վերջին սյունյակում ցույց ե տրված յուրաքանչյուր կերի ուլային համարժեքը։ Այդ թվերը ցույց են տալիս կերի մեջ յեղած բոլոր սննդարար նյութերի գումարը։ Որինակ՝ աղյուսակում ցույց ե տրված, զոր 1 ֆունտ գարու մեջ կա 6 հարյուրերորդական ֆունտ սպիտակուց և 66 հարյուրյերորդական ֆունտ վոչսպիտակուցային նյութեր։ Ուշըմն մի ֆունտ գարու մեջ յեղած բոլոր սննդարար նյութերի գումարն ե 6+66=72 հարյուրերորդական ֆունտ, զորը և ցույց ե տրված ուլային համարժեքի սյունյակում։

Կերի միավորներ։ Ինչքան առավելություններ ել վոր ունենան ուլային համարժեքները և կերերի բաղադրության աղյուսակները, այնուամենայնիվ նրանք ունեն մի անհարմարություն — նրանցից ոգտվելը դժվար ու անմատչելի յե կիսագրագետ տնտեսատիրոջ համար։ Ավելի հեշտ ու գրագետ զյուղացուն մատչելի յեն «կերի միավորներ»-ը, զորոնց մշակելու պատիվը պատկանում ե դանիացիներին։

Դանիայի գիտնականներ Ֆիորդը, Ֆրիսը և ուրիշները, զորոնք շատ բան են արել իրենց զյուղացիության տնտեսության բարձրացման գործում՝ կերերը վորոշելու և գնահատելու հեշտ ու զյուղացուն մատչելի միջոցներ եյին փնտում։ Այդ նպատակով, նրանք մի շարք տարիների ընթացքում, որական կերաբաժնի մեջ մտնող մի կերը մյուսով փոխարինելով՝ համեմատում եյին զանազան կերերի սննդարարական ույժն ու կենդանիների վրա արած ազգեցությունը։

Այդպիսով, նրանք զտան, զոր յեթե ուժեղ կերերից կազմած 1 ֆունտ խառնուրդը (բուսպ, թեփ, վարսակի ալյուր—հավասար չափով) համեմատենք ուրիշ կերերի հետ՝

մեկը մյուսով փոխարինելով՝ կարելի յե այդ կերերի գործած ազդեցությամբ դատել թե մի կեր մյուսից վորքան ավելի կամ պակաս միս, կաթ և այն կտա:

Հիմնական կերի մի ֆունտը նրանք անվանեցին կերի միավոր: Այսպիսով, յեթե իբրև կերի մեկ միավոր ընդունենք վերը հիշած ուժեղ կերերի 1 ֆունտ խառնուրդը, դրան հավասար մնունդ կարող են տալ  $2\frac{1}{2}$  ֆ. չոր առվույտը, 8 ֆունտ ճակնդեղը,  $\frac{3}{4}$  ֆունտ լավ քուսպը, 1 ֆունտ վարսակը:

Յեվ ահա ասում են, վոր 1 ֆունտ վարսակը հավասար ե կերի մեկ միավորի: Յեթե կթի կովին տրվող խոտին ու դարմանին ավելացնենք 1 ֆունտ վարսակ (կերի մեկ միավոր), կաթնատվությունը  $2\frac{1}{2}$  ֆունտ լավ, թանձը կաթով կբարձրանա: Այդ նույն չափով ավելի կաթ ստանալու համար պիտի տալ 8 ֆունտ ճակնդեղ և միայն  $\frac{3}{4}$  ֆունտ քուսպ: Դանիայում կազմված կերի սկզբնական միավորները Շվեդիայում գիտականորեն ստուգվելուց (պըոֆ. Ն. Հանսոնի կողմից) հետո, թեթև փոփոխության յենթարկվեցին: Այժմ, ըստ Դանիայի, Շվեդիայի և Նորվեգիայի գիտնականների միջև կայացած փոխադարձ համաձայնության, սահմանված ե նոր—կերի «Սկանդինավյան» միավոր, վորի համար իբրև հիմք ընդունվում ե վհչ թե կերի խառնուրդը, այլ գարին:

Մուս մասնագետները գերադասեցին ուսուական պայմանների համար կերի միավոր ընդունել վարսակը և նրա հետ համեմատել մյուս բոլոր կերերը. վարսակն իր սննդարձությամբ հավասար ե թեփի, քուսպի և ալյուրի խառնուրդին, վոր առաջ ընդունում ելին իբրև համեմատական չափանիշ:

Այդպիսով, կազմվել ե զանազան կերերի սննդարձարական արժեքի հետևյալ աղյուսակը. —

### ԿԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԿԸ

Կերի մնկ միավորը հավասար ե՝

1 ֆունտ	վարսակի ալյուրի,
$\frac{3}{4}$ »	կտավատի կամ արևածաղկի կճպած սեր մի քուսպի (գործարանային),
1 »	տնային ձեռվ քամած կտավատի քուսպի
$\frac{3}{4}$ »	քունչութի քուսպի,
$\frac{3}{4}$ »	բամբակի կեղևից հանած քուսպի,
$1\frac{1}{5}$ »	» կճեպավոր քուսպի,
$1\frac{1}{3}$ »	ցորենի թեփի,
$1\frac{1}{2}$ »	կանեփի կամ արևածաղկի կճեպավոր սեր մի՝ տնային քուսպի,
2 »	լավ տեսակի չոր առվույտի,
$2\frac{1}{2}$ »	» » » խոտի,
3 »	միջակ խոտի,
3-4 »	ճահճային խոտի,
4 »	գարնանացանի դարմանի,
6 »	աշնանացանի »
$3\frac{1}{2}$ »	լավ կարտոֆիլի,
5 »	ջրալի »
7 »	լավ կանաչ խոտի,
10 »	կերի ճակնդեղի,
10 »	ճակնդեղի տերեների,
12 »	ճակնդեղի թարմ մղվածքի (չօմ),
10 »	հացի չանչի (բարձա),
25 »	կարտոֆիլի չանչի

## ԿԵՐԻ ԶԱՓԵՐԸ

Ինչպես ել գատելու լինենք կերերի լավ հատկությունների մասին—ուղային համարժեքով, թե կերի միավորներով՝ միևնույն և —մենք պետք ե իմանանք, թե ինչպիսի սննդարար նյութերի և ինչ քանակությամբ կարիք ունեն թե չկթվող և թե շատ կամ քիչ կաթ տվող կովերը, ուրիշ խոսքով՝ մենք պետք ե իմանանք «կերի չափերը» — թե վճր կովին ինչքան սննդարար նյութեր պետք ե տալ: Բացի դրանից, անհրաժեշտ ե, վոր կերաբաժնում սպիտակուցը պակաս չինի, հակառակ դեպքում տված կերը կովն ամբողջությամբ չի մարսի. բայց չափից ավելի սպիտակուց ել չպիտի տալ, վոր իզուր չկորչի:

Գիտությունը պարզել ե, վոր ամեն մի անասուն կերի վորոշ քանակություն իր մարմնի պահպանության համար ե գործադրում, վոր կոչվում ե կենսապահ կեր (տես 2-րդ զլուխը):

Խոշոր կենդանին, ի հարկե, ավելի շատ կենսապահ կերի պահանջ ե զգում, իսկ յեթե մի կովը մյուսից 2 անգամ խոշոր ե (որինակ՝ մեկը 34 փութ կենդանի քաշում, մյուսը՝ 17 փ.), կենսապահ կեր կրկնակի չափով չի պահանջի, այլ մի քիչ պակաս: Ներքեսում բերված աղյուսակը ցույց ե տալիս, թե տարրեր մեծության կովերն ինչ կենսապահ կերի պետք ունին: Ընդհանրապես պետք ե իմանալ, վոր զյուղական միջակ կովի համար (16-25 փութ կենդանի և  $6\frac{1}{2}$ -10 փութ մաքուր քաշ ունեցող) պահանջվում ե կենդանի քաշի ամեն մի 3 փթին կերի

մեկ միավոր: Որինակ՝ յեթե կովի կենդանի քաշը  $21\frac{1}{2}$  ե, կապահանջվի կերի 7 միավոր, այսինքն՝ այնքան կեր, վոր սննդարաբությամբ հավասար լինի 7 փունտ վարսակի, կամ 14 ֆ. լավ չոր առվույտի, կամ 17-18 փունտ լավ չոր խոտի, կամ թե՛ 28 փունտ գարնանացանի դարմանի:

## ՊԱՀԱՆՁՎՈՒՄ Ե ԿԵՆՍԱՊԱՀ ԿԵՐ

	ԿԵՐԻ միավոր	ՖՈՒՆՏ սպիտակուց
12 փութ կենդանի քաշը ունեցողին.	$5\frac{1}{2}$ . . .	0,30
14 » » » » .	6 . . .	0,35
16 » » » » .	$6\frac{1}{2}$ . . .	0,40
18 » » » » .	7 . . .	0,45
20 » » » » .	$7\frac{1}{2}$ . . .	0,50
22 » » » » .	8 . . .	0,55
25 » » » » .	$8\frac{1}{2}$ . . .	0,63
27 » » » » .	9 . . .	0,68
30 » » » » .	$9\frac{1}{2}$ . . .	0,75
32 » » » » .	10 . . .	0,80
34 » » » » .	$10\frac{1}{2}$ . . .	0,85
36 » » » » .	11 . . .	0,90
38 » » » » .	$11\frac{1}{2}$ . . .	0,95
40 » » » » .	12 . . .	1,00

Այս աղյուսակով կարելի յե վորոշել, թե յուրաքանչյուր կովին վորքան կեր պիտի տալ (կերածելով կերի միավորների), վոր միայն բավական լինի նրա գոյությունը պահպանելու:

Կոշտ կերի չափը: Ի հարկե, կոշտ կերի համար հասանառ չափ չի կարող լինել, վորովհետեւ այդ կախված ե նրանից, թե ինչպիսի կոշտ կերեր ունինք (խոտ, դարձման, թե մղեղ), ինչ արժեն դրանք և անտեսության մեջ եժանագին արմատապուղներ կմն, թե չե — բայց միջին հաշվով պետք ե ընդունել, վոր որական չոր կեր պահանջվում ե կովի կենդանի: Քաշի մեկ քառասուն-

յերորդականի չափով։ Այդ պատճառով հեշտ հիշելու համար, յես առաջարկում եմ կովին կերակրել այն հաշվով, վոր նրա կենդանի քաշի ամեն մի փթին ընկնի մեկ ֆունտ կեր։

Արդյունատու կերի չափերը։ Վարքան կեր, կամ ավելի ճիշտ՝ սննդարարար նյութ ե պահանջվում կաթ արտադրելու համար։ Ինչպես հետո կտեսնենք, բոլոր գեղքերի համար այդպիսի հարմար չափ վարոշել չի կարելի։ Մենք գիտենք, վոր կաթ գոյանալու համար վորոշ քանակությամբ սպիտակուց ե պետք, վորը յեթե կերի հետ չտանք, չենք ել կարող հուսալ, թե կովը մեզ կաթ կտա։ Որինակ՝ որական 50 ֆունտ կաթ տվող կովն այդ կաթի հետ 2 ֆունտ մաքուր սպիտակուց ե արտադրում։ Պարզ ե, վոր յեթե կովը կերի հետ համապատասխան չափով սպիտակուց չտանա, կաթի հետ ել սպիտակուց չի տա։

Սպիտակուցի չափն արդյունատու կերի մեջ։ Սպիտակուցի պահանջն ըստ կաթնատվության կարելի յե վորոշել այսպես. ամեն մի 5 ֆունտ կաթին  $\frac{1}{4}$  ֆ. սպիտակուց. իսկ յերբ մոր արգանդում հորթն այնքան մեծացած ե լինում, վոր մորից զգալի քանակությամբ մնունդ ե խլում (մայրական արյունը), այն ժամանակ հղիության վերջին 2-3 ամսում հորթի համար պետք ե ավելացնել որական  $\frac{1}{5}$  ֆ. սպիտակուց յեկա։ Յեթե կովի մննդառության պահանջն արտահայտենք կերի միավորներով՝ այն գեղքում պահանջը կաթ գոյացնելու համար պետք ե հաշվենք ամեն մի  $2\frac{1}{2}-2\frac{3}{4}$  ֆունտ կաթին՝ կերի մեկ միավոր։ Այդ նշանակում ե՝ վորպեսզի նոր ծնած կովս ամրանը կաթն ավելացնի, պետք ե ամեն մի  $2\frac{3}{4}$  ֆունտ կաթին ավելացնենք մի միավոր ուժեղ կեր, իսկ ձմեռը, յերբ կաթն ավելի թանձր ե, պետք ե հաշվել ամեն մի  $2\frac{1}{2}$ , ֆունտ կաթին՝ կերի 1 միավոր։

8.

## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԿԵՐԱՐԱԺԻՆԸ

Նախորդ գլուխներում ասածներից պարզ ե, վոր կերարաժին կազմելիս մենք պետք ե նկատի ունենանք և կովին անհրաժեշտ սնունդը, այսինքն՝ կենսապահ կերը, և հորթուկի սննդառությունը մոր արգանդում, և հնարավոր չափով առատ կաթ ստանալը։

Կենսապահ կերը հեշտ ե վորոշել 31 -րդ յերեսի աղյուսակով կամ ավելի պարզության համար, հաշվելով կովի կենդանի քաշի ամեն մի 3 փթին՝ կերի 1 միավոր և 1 փթին՝  $\frac{1}{40}$  ֆունտ սպիտակուց։ Որինակ՝ 20 ֆութ կենդանի քաշ ունեցող կովին անհրաժեշտ ե  $\frac{20}{40}$ , այսինքն՝  $\frac{1}{2}$  ֆունտ սպիտակուց և ամբողջ կերն այնքան, վոր կերի 7  $\frac{1}{2}$  միավոր կազմի։

Ի՞նչ չափով պիտի ավելացնել արգյունատու կերը և կարելի՞ յե արդուր նախատեսել, թե վորքան կաթ կարող ե տալ կովը։

Վճռ, առաջուց այդ իմանալ չի կարելի, վորովհետեւ տարբեր կովեր տարբեր չափով են կաթ տալիս և տարբեր կերպով ել արդարացնում են կերը։ Տնտեսական տեսակետից այդ հարցին մոտենում ենք այսպես—կովը պետք ե այնքան առատ կաթ տա, վոր կերակրելը ձեռնառու լինի, տված կերը կաթով հատուցվի։

Իսկ այդ ի՞նչպես անենք։

Նախորդ գլխում ասացինք, վոր կերի ամեն մի միավոր կարող ե տալ  $2\frac{1}{2}-2\frac{3}{4}$  ֆունտ կաթ. այդ նշանակում ե արդյունք, վոր կերի ամեն մի հավելումը պետք ե

$2^{1/2}-2^{3/4}$  ֆունտով կաթն ավելացնի—վհչ, այդ միայն միջին չափն ե, իսկ կերն ուրիշ կերպ պիտի հաշվի առնել:

Նոր ծնած կոմք այնքան առատ կաթ ե տալիս, վոր կերը պակասած գեղքում անգամ կաթն իր մարմնի հաշվին ե տալիս, կամ, ինչպես ժողովուրդն ե ասում «իր մսիցն ե կտրում»:

Այդպիսով, սկզբնական շրջանում քիչ կեր տալիս կերի մեկ միավորից կարող ե ստացվել նույնիսկ 4 ֆունտ կաթ, բայց, ի հարկե, այդ չի նշանակում թե՝ այդպես պետք ե կերակրել. այդպես կերակրելուց կովը կնիհարի, կհյուծվի և շուտ ել կցամաքի:

Ենթադրենք թե՝ 22 ֆունթ կշռող կովին որական տալիս ենք 15 ֆունտ սովորական խոտ (կերի 5 միավոր), 10 ֆունտ գարնանցանի գարման (կերի  $2^{1/2}$  միավոր), 2 ֆունտ վարսակ (կերի 2 միավոր) և 3 ֆունտ թեփ (կերի  $2^{1/2}$  միավոր) ու ստանում որական 15 ֆունտ կաթ: Ամբողջ կերաբաժինը, ըստ մննդարաբության, հավասար է կերի 12 միավորի: Վորովինեաւ այդ կոմք իր կենդանի քաշի համաձայն պահանջում ե կենսապահ կերի 8 միավոր (տես եջ 31), ուստի կաթի բաժին մնում է կերի 4 միավոր ( $12-8=4$ ): Նշանակում ե՝ մննդարաբությամբ  $\frac{4}{4}$  միավորի հավասար կերից ստացվում ե 15 ֆունտ կաթ, այսինքն՝ կերի 1 միավորից՝  $3\frac{3}{4}$  ֆունտ: Հասկանալիյէ, վոր մննդարաբ նյութի պակասորդը կովը վերցնում է իր մարմից, այսինքն՝ նիհարում ե:

Հետազում մեր աշխատանքն այն պիտի լինի, վոր կովին հարկադրենք, հասրավորին չափ, կաթը շատացնել. Պրա համար սկսում ենք մնումնի ուժեղացնել: Դիցուք՝ ավելացնում ենք կերի 3 միավորի հավասար 3 ֆունտ ուժեղ կեր, և կովն արդեն տալիս ե վոչ թե 15, այլ 22 ֆունտ կաթ: Նախկին կերի 4 միավորին ավելացնենք 3, դարձավ կերի 7 միավոր, վորից ստացվում ե 22 ֆունտ կաթ, այսինքն՝ կերի 1 միավորից՝  $3\frac{1}{7}$  ֆունտ: Նշանա-

կում ե կովն ավելի կաթ ե տալիս, քան կարող ե տալ ( $2\frac{3}{4}$  ֆ. վոչ ավելի) առանց նիհարելու:

Պարզ ե, վոր կովն ելի կարող ե կաթն ավելացնել: Ելի ավելացնում ենք կերի 3 միավոր, ընդամենը՝ արդյունատու կերի 10 միավոր. կաթն ավելանում ե 6 ֆունտով, ընդամենը 28 ֆունտ, հետևապես կերի 1 միավորից ստացրում ե  $2\frac{4}{5}$  ֆ. կաթ:

Ուժեղ կերի 3 միավորի նոր հավելումը (կերի 13 միավոր) կաթն ավելացնում ե 4 ֆունտով. կոմք ընդամենը տալիս ե 32 ֆունտ, վոր կազմում ե՝ կերի 1 միավորից ( $32:13=2\frac{1}{2}$ ) մոտ  $2\frac{1}{2}$  ֆունտ կաթ: Ավելացնելով նորից կերի 2 միավոր (ընդամենը 15), մենք կաթը հասցնում ենք մինչև  $34\frac{1}{2}$  ֆունտի (2 $\frac{1}{2}$  ֆ. հավելում): Ուժենա, կերի 1 միավորը տալիս ե ( $34\frac{1}{2}:15=2\frac{1}{3}$ ) միայն  $2\frac{1}{3}$  ֆունտ կաթ: Կերի 1 նոր միավորն ավելացնում ե  $1\frac{1}{2}$  ֆունտ կաթ, հետևապես կերի 16 միավորը տալիս ե 35 ֆ. կաթ, այսինքն՝ կերի 1 միավորը՝  $2\frac{1}{3}$  ֆունտ:

Բայց մինչեւ յերբ պիտի շարունակենք կերի հավելումը. արդյոք այնքան ժամանակ, քանի դեռ կովը կաթն ավելացնում, կամ ավելացնելու նշաններ ե ցույց տալիս: Վհչ. ինչպես քիչ առաջ ասել ենք, կերը պետք ե ավելացնել այնքան ժամանակ, քանի դեռ այդ ձեռնաու յետեղական գներով:

Այժմ վերցնենք այդ նույն որինակը և կերի միավորի արժեքը. հաշվենք վոչ թե կաթի ֆունտերով, այլ արված կերի և ստացած կաթի արժեքով. յենթագրենք, վոր կերի 1 միավորը (որինակ 2 ֆ. վարսակ կամ  $\frac{3}{4}$  ֆ. քուսպ) նստում ե 2 կոպ., իսկ մի ֆունտ կաթն արժե  $1\frac{1}{2}$  կոպ. (փութը 60 կոպեկ):

Այդ դեպքում, ծնելուց մինչեւ ցամաքելը ղեկավարվում են կերակրելու հետևյալ կարգով.

Ծնելուց առաջ կովին տալիս են թեթև, բայց անընդարաբ կեր, վորպեսզի նրա ստամոքսը չծանրաբեռնվի և չնշառությունը չդժվարանա, այսինքն՝ քիչ դարձան և

սրանից ավելի խոտ (լավ տեսակի), հետը խառնելով 1-2 փունտ աղացած կամ ջարդած վարսակ:

Միաժամանակ պետք ե դիտել կովի կուրծը—յեթե նկատվի, վոր նա կոշտանում ե, պետք ե կլթելով դուրս հոսեցնել կրծի միջի թանձը հեղուկը՝ խիժը:

Ծնելուց հետո, առաջին շաբաթվա ընթացքում պիտի շարունակել խոտով կերակրելը և տալ կատավատի խաշած սերմից, կամ թարմ քուսպից և կամ վարսակից պատրաստած խմելիք: Բայց այդ կերերից 2-3 ֆ. ավելի չըպետք ե տալ: Յերկրորդ շաբաթից, յերբ արդեն կովը մաքրվել, կադուրվելու ընական տեսք ե ստացել, սկսում են կերակրել գարմանով և ավելացնել ուժեղ կերեր: Այս դեպքում հագելումն այնպես պիտի անել վոր ինչքան հնարավոր ե, կաթը շատանա, բայց թանդ չնստի տիրոջը:

Մենք արդեն գիտենք, վոր այդ ժամանակ կարելի յե կովին շատ ուժեղ կերակրել և ստիպել, վոր շատ կաթ տա, բայց, ի հարկե, վոչ միակերպ՝ տարբեր կովերին, վորովհետեւ նրանք իրենց մեծությամբ ու կաթնատվությամբ միանման չեն: Մեկը 35-40 փութ կենդանի քաշունի, միուսը՝ 15-20 փութ, մեկը շատակեր ե, մյուսը՝ քչակեր, մեկը մեծ կուրծ ունի և ընդունակ ե շատ կաթ տալու, մյուսը՝ վոչ: Այդ պատճառով ել ամեն մի կովի համար կերն ուժեղացնելու սահմանն առանձին պիտի վորոշել և այդ կարելի յե անել շատ հասարակ ձեռքի:

Մենք յենթափեցինք, վոր նոր ծնած կովն առաջին շաբաթվա վերջին տալիս ե 15 փունտ \*) կաթ:

Յերկրորդ շաբաթից սկսում ենք ուժեղ կերն ավելացնել և նկատում ենք, վոր կովն որեցոր ավելացնում ե կաթը: միաժամանակ տեսնում ենք, վոր յերբ սկզբնական կերին ավելացնում ենք 3 փունտ թեփ ու վարսակ (փունտը 2 կոպ.), կաթն ավելանում ե 7 փունտով:

3 փունտ ուժեղ կերն արժե 6 կոպեկ, իսկ ավե-

\*) Կաթի քանակը փունտով հաշվեն ավելի հարմար ե, քան չափերով, շերով և այլն:

լացած՝ 7 փունտ կաթն ամենաքիչն արժե 20  $\frac{1}{2}$  կոպեկ: Պարզ ե, վոր այդ կերն ավելացնելը մեզ շատ ձեռնուու յե, դրա համար ել շարունակում ենք ավելացնել: Հետո ավելացրինք ելի 3 փունտ, այսինքն 6 կոպեկի ուժեղ կեր, կաթն ավելացավ 6 փունտով, վոր արժե 9  $\frac{1}{2}$  կոպեկ. նշանակում ե դեռ ձեռնուու յե: Հետեւալ 3 փունտ ուժեղ կերից (6 կոպ.) ստացանք միայն 4 փունտ ավելի կաթ, վոր արժե 6 կոպ., այսինքն այնքան, ինչքան ավելացրած կերն արժե: պարզ ե, վոր դրանից դենը չարժե կերն ավելացնել: Այժմ մենք ընդամենը 13 փունտ ուժեղ կեր ենք տալիս և ստանում կաթի բարձր ամենաածնուու քանակությունը, արտինքն՝ 32 փունտ:

Մենք կարող ենք ի հարկե, կաթն ելի ավելացնելը բայց հաշիվը ցույց ե տալիս, վոր յեթե ելի շարունակենք կերն ավելացնել, կաթն իր ծախքը չի ծածկի: Դիցուք՝ կերի 2 միավոր հավելումը, վոր արժե 4 կոպեկ՝ տալիս ե 2  $\frac{1}{2}$  փունտ ավելի կաթ— 3  $\frac{3}{4}$  կոպ. արժողությամբ, այսինքն՝  $\frac{1}{4}$  կոպ. մնասով, իսկ յեթե շարունակենք կերի մեկ միավոր ել ավելացնել, վոր արժե 2 կոպեկ, կաթը  $\frac{1}{2}$  փունտ կավելանայ, վոր արժե  $\frac{3}{4}$  կոպ. այսինքն՝ մնաս կանենք 1  $\frac{1}{4}$  կոպեկ:

Կերակրելու ամբողջ ընթացքը յերեւում ե հետեւալ աղյուսակից:

Արդյունատու կեր, կերի միավորներով	Կաթի քանակը փունտերով	Կերի 1 միա- վորից ստաց- ված ե կաթ	Արժեքը կո- պեկներով
Տրում եր Ավելա- ցը եր	Ընդունակու- թը եր	Ընդունակու- թը եր	Տրում կո- պեկ եր
4	—	4	—
4	3	7	15
7	3	10	22
<b>10</b>	<b>3</b>	<b>13</b>	<b>28</b>
13	2	15	32
15	1	16	34 $\frac{1}{2}$
			$\frac{1}{2}$
			35
			$\frac{1}{2}$
			21 $\frac{1}{5}$
			$\frac{1}{2}$
			1 $\frac{1}{2}$
			2
			$\frac{3}{4}$

Հետեապես, այդ կովի ուժեղ կերի ամենաբաձր չափը  
13 ֆունտ եւ 32 ֆունտ կաթով։ Մի ուրիշ ավելի  
խոշոր կամ ավելի կաթնառատ կով կարող ե ավելի ու-  
տել և ավելի ոգուտ տալ, վոր հեշտ ե վորոշել վերեռում  
հիշած ձեռով։

Ձեռնառու կերի քանակը կախված ե և մի ուրիշ հաճ-  
գամանքից, մեր բերած որինակում կաթի ֆունտը հաշ-  
վեցինք  $1\frac{1}{2}$  կովեկ, իսկ այն տեղերում, վորտեղ կա-  
թի զինըբարձր ե (որինակ՝ քաղաքամերձ տեղերում), կերը  
կարելի յե ելի ավելացնել։

Մոտավորապես 3-րդ շաբթի վերջին, մենք կիմա-  
նանք, թե ամենաշատը վորքան ուժեղ կեր կարելի յե տալ  
կովին և ամենաշատը վորքան կաթ կարելի յե ստանալ։  
Այսուհետև 2-ից մինչև 3 ամիս, նայած կովին, կաթի  
քանակը նույնը կմնա, իսկ հետո կսկսի պակասել ու նրա  
հետ ել կպակասի կերակրելու ձեռնառությունը։

Կովատերը նորից հաշիվ ե անում և մտածում այս-  
պես. մինչև որս կովին տալիս եյի խոտ, դարձման,  
կամ մղեղ և 13 ֆունտ ուժեղ կեր ու դրա փոխարեն  
ստանում ելի որական 32 ֆունտ կաթ. իսկ յեթե 3 ամ-  
սից հետո նույն կերն ստանալով կովը 3-4 ֆունտ կաթ  
պակաս է տալիս, այդ նշանակում ե, վոր կովի կուրծն իր  
գործունելությունը թուլացնում ե ու ամբողջ արդյունա-  
տու կերը կաթ պատրաստելու վրա չի գործադրվում։ հե-  
տևապես կովին դուր ենք առաջվա նման կերակրում, ուս-  
տի մենք կարող ենք կերը քիչ պակասեցնել։ Այսպես ել  
անում ենք. քանի կաթը պակասում ե, մենք ել պակա-  
սեցնում ենք կերը հետեւյալ հաշվով։— պակասած կաթի  
յուրաքանչյուր  $1\frac{1}{2}$  ֆունտին՝ 1 ֆունտ կեր։

Դուք տեսնում եք, վոր սկզբում կերն ավելացնե-  
լով կովին հարկադրում եյինք կաթն առատացնել, իսկ  
այժմ արդեն, վոչ թե կովն ե հետեռում մեզ, այլ մենք՝  
նրան։ Հետեռում ենք, թե ինչ չափով ե հետզհետե կաթը  
պակասում և համապատասխան չափով ել կերն ենք պա-

կասեցնում։ Այդպիսով, ամսե-ամիս, կաթը պակասելու  
հետ՝ կերի քանակն ել իջեցնելով՝ աստիճանաբար հաս-  
ցնում ենք 1-2 ֆունտի։

Այժմ հեշտ կարող ենք բացատրել, թե ինչո՞ւ յեր-  
կու միակերպ Ա. և Բ. տնտեսություններում, վորոնց մա-  
սին հիշեցի զրույցիս սկզբում (Եջ 6), մինչույն քանա-  
կությամբ կեր գործադրելով, տարբեր չափի կաթ ստա-  
ցան։

Ա. տնտեսության մեջ կերակրում եյին այնպես,  
ինչպես քիչ առաջ ասացինք։ Կովերն այնտեղ ծնում եյին  
սովորաբար նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, և այդ ժա-  
մանակ ամեն մի նոր ծնած կովին տրվում եր որական  
մինչև 12 ֆունտ ուժեղ կեր։ Հետո, կաթը պակասելու  
հետ՝ քչացնում եյին և կերը, հասցնելով մինչև 1-2 ֆուն-  
տի, վորով կերակրում եյին մինչև կանաչ խոտի լավ  
բարձրալը, վորպեսզի կովը լիովին կշտանա և վոչ միայն  
կաթը չպակասեցնի, այլև ավելացնի։ Աշնանը, յերբ նա-  
խիրն ամառվա արոտներից գիրացած, բայց պակասած  
կաթով կամ ցամաքած եր գոմ մանում տալիս եյին 1-2  
ֆունտ ուժեղ կեր։

Բ. տնտեսության մեջ ուրիշ կարգ եր տիրում։ Աշ-  
նանից, հենց վոր տավարը գոմն եր մտնում, մինչև  
գարնան դուրս թողնելն որական ամբողջ տավարի առաջն  
եյին լցնում այնքան կեր, վոր ամեն մի գլխին ընկնում  
եր 4 ֆունտ ուժեղ կեր։ Այդպիսով, թե ծնած և թե մո-  
գամեր կովերը միենույն չափով եյին կեր ստանում։ Հասկա-  
նալի յե, վոր այդ տնտեսության մեջ 4 ֆունտ ուժեղ կեր  
ստացող նոր ծնած կովը չեր կարող այնքան կաթ տալ,  
վորքան Ա. տնտեսության մեջ 8-12 ֆունտ կեր ստացող  
կովը։ Այդ պատճառով ել Բ. տնտեսության կովերը կաթ  
տալու ամենալավ ժամանակ՝ կերի պակասությունից  
քաղցած եյին մնում, գարնան դեմ սաստիկ նիհարում  
եյին և հյուծված եյին արոտ դուրս գալիս։ Արոտով ել  
չեյին կարող կաթն ավելացնել, վորովհետև սկզբնական

շրջանում կերի մի մասը գործադրվում եր մարմնի կադ-  
դուրման վրայ Իսկ աշնանը, ընդհակառակն, 4 ֆունտ ու-  
ժեղ կերը համեմատած աննշան կաթի հետ՝ չափազանց  
շատ եր, դրա համար ել ապրանքը տիրոջ համար միան-  
գամայն անոգուտ կերպով գիրանում եր, մի հանգամանք,  
վոր վայ եր ազդում թե կաթնատվության և թե ծնելու  
վրա:

Վերջնական հաշվով, այդ տնտեսության մեջ ամբողջ  
ձմեռն այնքան կեր եր ծախսվել, վորքան Ա. տնտեսու-  
թյան մեջ, բայց կաթն ստացվել եր կրկնակի չափով պա-  
կաս: Գաղտնիքն այն եր, վոր այս տնտեսության մեջ  
կարողանում եյին կերը ճիշտ կերպով գործադրել՝ ուժեղ  
կերի քանակը կաթի համեմատ փոխխելով 1 ֆ. մինչև  
12 ֆունտ, իսկ Բ. տնտեսության մեջ այդ կերն աշնանը  
զուր եր կորչում, մինչդեռ գարնանը կովերի ծնելու ժա-  
մանակ կերը չեր բավականացնում: Սխան ուղղվեց. այդ  
տնտեսության մեջ ել կովերի կաթնատվությունը միան-  
գամից փոխվեց գեպի լավը, հենց վոր փոխվեց կերակրե-  
լու կարգը:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր կերակրելու եյու-  
թյունը վոչ միայն առատ կեր ունենալու մեջ ե, այ յեվ  
այդ կերն ըստ տարվա յեղանակների յեվ կաթի չափի  
կանոնավորապես դասավորելու մեջ:

### ԿԵՐԱԲԱԺՆԻ ՈՐԻՆԱԿՆԵՐ

1. Կովի կենդանի քաշը 25 վութ ե. նոր ծնած ժա-  
մանակ տալիս ե 20 ֆունտ կաթ. տալիս ենք 18 Փունտ  
միջին վորակի չոր խոտ յեվ 10 ֆունտ գարնանացանի  
դարման: Լրացոցից կերի համար կարելի յե զնել վար-  
սակ— վութը 65 կրպեկով. լավ, կեղեվը հանած արեգա-  
ծաղկի քուազը վութը 70 կրպ., գարու ալյուրը՝ ֆ. 50  
կրպ., ցորենի թեփը ֆ. 65 կրպ. յեվ ճակնդեղը՝ ֆ. 4 կրպ.:

Ի՞նչպես կազմել ճիշտ կերաբաժնին:

Ամենից առաջ մենք հաշվում ենք, թե սննդարարության  
տեսակետից թված կերերից վորն ավելի եժան կնստի:  
Դրա համար պետք ե իմանալ, թե առեն մի կերի փութը  
քանի կերի միավոր ե պարունակում և ինչ ե նստում կերի  
մեկ միավորը— այդ հաշվում ենք 29-րդ յերեսում զե-  
տեղված աղյուսակով և ստանում հետեւյալ պատկերը:

ԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ	1 ՎՈՒԹ ՄՈՒԹՔ	ԿԵՐԻ ՎՈՐԱԿ ՎՈՐԱԿ	ԿԵՐԻ ՎՈՐԱԿ ՎՈՐԱԿ
Զոր մարդախոտ	30	13	$2\frac{1}{3}$
Գարնանացանի դարմ.	10	10	1
Վարսակի ալյուր	65	40	$1\frac{5}{8}$
Գարու ալյուր	60	40	$1\frac{1}{2}$
Արևածաղկի քուազ	70	53	$1\frac{1}{2}$
Ցորնի թեփ	65	30	$2\frac{1}{6}$
Ճակնդեղ	4	4	1

Այս աղյուսակից պարզ յերևում է, թե ինչպես չարաշար սխալվում են նրանք, ովքեր կարծում են, վորդարմանից հետո խոտն ամենաեժան կերն է, իսկ քուսպերը՝ շատ թանգ են: Մենք տեսնում ենք, վոր խոտի մեջ կերի 1 միավորը (սննդարարույժը) մեկու կես անգամ թանգ ե նստում քուսպի կերի միավորից, չնայելով շուկայի գըներով խոտի 1 փութը 2  $\frac{1}{2}$  անգամ քուսպից եժան է:

Դրա համար ել մենք կաշխատենք խոտ քիչ գործածել, խնայել փոխարինելով այն գլխավորապես դարձանով: Ուժեղ կերերից՝ առաջին տեղը տալիս ենք քուսպին, հետո գարու ալյուրին, ապա վարսակի ալյուրին. իսկ թեփը, վորպես ամենաթանգ կեր՝ չենք գործադրում:

Խոտից ու թեփից խուսափելով մենք կարող ենք ոգտագործել եժանագին ճակնդեղը, վորի մեջ կերի մեկ միավորն այնքան եժան ե նստում, վորքան գարնանացանի գարմանի կերի միավորը. բացի դրանից, ճակնդեղն ունի նաև մի զնահատելի առավելություն: Նա ձմրան կոշտ յուղի հատկությունը լավացնում է, մոտեցնելով նրան ամրան յուղի գույնին ու փափկությանը:

Կովին տալիս եյինք 18 ֆունտ խոտ, այսինքն կերի 6 միավոր, 2  $\frac{1}{3}$  կոպեկից—ընդամենը 14 կոպեկի: Այդ խոտը կիսով չափ կը ճամատում ենք, այսինքն՝ տալիս ենք միայն 9 ֆունտ—կերի 3 միավոր, վոր արժե 7 կոպ.: Այդ կրճատումից որական 7 կոպեկ տնտեսվում է, սակայն պակասեցրած խոտի փոխարեն ավելացնում ենք 5 ֆունտ գարման և 7 ֆունտ ճակնդեղ (կերի 1  $\frac{3}{4}$  միավոր): Ավելացրած գարմանը կարծենա 1  $\frac{1}{4}$  կոպ, իսկ ճակնդեղը՝ 1  $\frac{3}{4}$  կոպ., ընդամենը 3 կոպեկ: Հետևապես խոտը կրճատելով շահում ենք 7 կոպեկ, իսկ գարմանի ու ճակնդեղի վրա ծախսում 3 կոպեկ—որական տըստեսվում ե—4 կոպեկ, վոր ամբողջ ձմեռվա ընթացքում կամի 9-10 ռուբլի:

Մեր հիմնական կերը (խոտ, գարման, ճակնդեղ) սպիտակուցով շատ աղքատ է, ուստի դրան պիտի ավե-

լացնել այնպիսի կեր, վորն առանձնապես հարուստ և սպիտակուցով, ինչպես որինակ՝ քուսպն է: Յեթե մեկ մաս քուսպից, մեկ մաս զարու և մեկ մաս վարսակի ալյուրից խառնուրդ կազմենք ու դրանով սկսենք կովի կերն ավելացնել այնպես, ինչպես նկարագրած ե 34-36 յերեսներում, այն դեպքում մեր կազմած կերաբաժինը կլինի ճիշտ, եժան կեստի ու կտա կաթի ամենաձեռնտու բարձր քանակը:

Կերաբաժնի մեջ ճակնդեղի քանակը շատացնելով, մենք կարող ենք ել ավելի եժանացնել կերը: Մենք համարձակ կարող ենք կովին որական 1  $\frac{1}{2}$  փութ և դեռ ել ավելի բազուկ տալ (Դանիայում որական 3 փթից ավելի յեն տալիս): Արմատապտուղներով շատ կերակրելու գեղագում չպիտի մոռանալ վոր նրանց մեջ շատ քիչ սպիտակուց կա: Այդ պակասը լրացնելու համար քուսպի քանակը համապատասխան չափով պիտի ավելացնել:

Ա. Ծննդեսության մեջ այնքան խոտ կա, վոր ամեն մի անատունի որական հասնում է 20 ֆունտ, դարձան ել կարավականաշափ, բայց վոչ ուժեղ կեր կա, վոչ արմատապտուղ: Կերերի գները նույնն են, ինչ վոր ցույց ե տրված 41 յերեսում:

### ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՈՑՆԵՐ ԶՈՒՆԻ, ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԿԵՐԱԲԱԺԻՆՆ ԱՌԱՆՑ ՓՈՂ ԾԱԽՍԵԼՈՒ

Առանց ուժեղ կերերի, տափարը չոր խոտի ու դարմանի կապելով չի կարելի կաթը շատացնել, հետևապես պետք է ուժեղ կեր ճարել, բայց տնտեսության մեջ վճռ հացահատիկ կա, վճռ ել փող:

Նախորդ աղյուսակից (Եջ 41) տեսանք, վոր խոտի կերի մի միավորն ավելի թանգ արժե, քան քուսպինն ու վարսակինը, իսկ խոտ—մենք շատ ունենք:

Մենք մտածում ենք այսպես. խոտի սննդարար նյութերը մեզ վրա թանգ են նստում, բացի դրանից,

նրա միջի սպիտակուցը պակասե, և յեթե խոտով շատ կերակրենք՝ կովի ստամոքսը կծանրաբեռնվի: Խոտի կերաբաժինը կիսով չափ կրճատենք, այսինքն տանը՝ միայն 10 ֆունտ: Խնայած 10 ֆունտը, վոր ձմեռվա ընթացքում 50-60 փութ կանի, կարելի յե ծախել ու նրա փողով ուժեղ կեր գնել: Ի՞նչ կստացվի: Նախորդ աղյուսակից (եջ 41) յերեսում ե, վոր մի փութ խոտի մեջ կերի 13 միավոր կա: 50 փութ խոտ ծախելով, մենք զրկվում ենք կերի 650 միավորից: Ծախած փողով, այսինքն՝ 15 ոռւբլով կգնենք 10 ոռւբլու վարսակ և 5 ոռւբլու քուսալ: 10 ոռւբլով կարող ենք գնել  $15\frac{1}{2}$  փութ վարսակ, իսկ 5 րուբլով,  $\frac{7}{8}$  փութ քուսալ:  $15\frac{1}{2}$  փութ վարսակի մնընդարար նյութերը կազմում են կերի 620 միավոր, իսկ 5 փութ քուսալինը՝ 265 միավոր— ընդամենը՝ կերի 885 միավոր: Այդպիսով, խոտի հետ կերի 650 միավոր ծախելով, առնում ենք վարսակ ու քուսալ՝ կերի 885 միավորով, այսինքն աշխատում ենք կերի 235 միավոր, վոր կտա (հաշվելով կերի 1 միավորից  $2\frac{1}{2}$  ֆ. կաթ) 59 փութ կաթ: Ուրեմն, կերի միավորների և նրանց արժեքի հաշվելու լավ իմանալով, առանց մի կոպեկ ծախելու, մի կեր մյուսով փոխարինելով և ճիշտ կերաբաժին կազմելով աշխատում ենք 59 փութ կաթ, վոր արժե 35 ոռւբլի 40 կոպ.:

III. Կովի կենդանի քաշը 20 փութ ե. տալիս ենք որական 15 ֆունտ լավ խոտ յեվ 15 ֆունտ գարնանցանի դարձան. ստանում ենք 14 ֆունտ կաթ: Բավարար և արդյոք կովին տված մնունդը:

Յ աղյուսակից (եջ 31) մենք աեմում ենք, վոր 20 փթանոց կովս իր գոյությունը պահպանելու համար կերի  $7\frac{1}{2}$  միավոր ե պահանջում և ապա ամեն մի  $2\frac{3}{4}$  ֆունտ վոչ այնքան յուղալի կաթի համար (նոր ծնած ժամանակ)՝ կերի 1 միավոր, այսինքն՝ 14 ֆունտ կաթի համար կերի 5 միավոր: Ուրեմն՝ այդ կովին պետք ե տալ ընդամենը կերի  $12\frac{1}{2}$  միավոր կենսապահ և արդյունատու.

կեր. իսկ մենք տալիս ենք 15 ֆունտ խոտով՝ 6 միավոր և 15 ֆունտ դարմանով՝ մոտ 4 միավոր, այսինքն՝ պահանջվածից  $2\frac{1}{2}$  միավոր պակաս, վորի հետևանքով կովը նիհարում ե, և կաթը հարկ յեղած չափով չի առատանում: Բացի դրանից, այդ կերն սպիտակուցով շատ աղքատ ե— 15 ֆունտ խոտի մեջ կա  $\frac{3}{4}$  ֆ., իսկ 15 ֆունտ դարմանի մեջ միայն 0,15 ., այսինքն  $\frac{1}{7}$  ֆունտ սպիտակուց: Ուրեմն՝ կովին մենք ընդամենը տալիս ենք  $\frac{9}{10}$  ֆ. սպիտակուց, այնինչ 20 փութ կենդանի քաշ ունեցող կովի համար պահանջվում ե  $1\frac{1}{2}$  ֆ. (եջ 31) և 14 ֆունտ կաթի համար (եջ 32)  $\frac{3}{4}$  ֆ. սպիտակուց, ընդամենը 1  $\frac{1}{4}$  ֆունտ: Նշանակում ե՝ մեր տված կերաբաժնում պակասում ե  $\frac{1}{4}$  ֆունտ սպիտակուց, վորի հետևանքով տված կերի մի մասը կմնա անմարս (բացարությունը տես 16-րդ յերեսում):

Պետք ե ուրեմն սնունդն ուժեղացնենք շատ սպիտակուց պարունակող կերով, վրապիսին քուսալ ե: Յեթե կերին ավելացնենք 2 ֆունտ կտավատի քուսալ և 2 ֆ. վարսակի ալյուր, կտացվի՝ 2 ֆ. քուսալը պարունակում ե կերի 2  $\frac{2}{3}$  միավոր և  $1\frac{1}{2}$  ֆունտ սպիտակուց, 2 ֆ. վարսակը պարունակում ե կերի 2 միավոր և  $1\frac{1}{7}$  ֆունտ սպիտակուց: Յեղած կերի վրա, այդպիսով, կավելանա կերի 4  $\frac{2}{3}$  միավոր՝  $\frac{2}{3}$  ֆունտ սպիտակուցով:

Այդ հավելումից կերի  $2\frac{1}{2}$  միավորը և  $1\frac{1}{3}$  ֆունտ սպիտակուցը կլրացնեն հիշյալ կերի պակասը, իսկ կերի 2-ից ավելի միավորը  $1\frac{1}{2}$  ֆունտ սպիտակուցով՝ կաթը կավելացնեն 5-6 ֆունտով: Քուսալի և վարսակի հետագա հավելումներով կտեսնենք, թե մինչեւ վնր աստիճան կարելի կլինի կաթը բարձրացնել (տես 8-րդ գլուխ) ձեռնուու կերպով:

## ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Մենք արդեն տեսանք, վոր կերերն իրարից տարբերվում են թե իրենց բազալլությամբ և թե կաթ արտադրելու վրա արած աղբեցությամբ։ Տեսանք նաև, վոր կերն ամբողջապես մարսվելու և նախ արյան, ապա կաթի ձեռփոխվելու համար անհրաժեշտ ե, վոր սպիտակուցային և վոչ-սպիտակուցային նյութերի խառնուրդը ճիշտ լինի կազմած։ Յեթե կովին դարմանն առանձին տանք, վորի մեջ քիչ սպիտակուց կա և շատ վոչ-սպիտակուցային նյութեր, վոչ-սպիտակուցային նյութերի ավելցուկը (ինչպես առված ե 4-րդ գլուխմ) առանց ոգտագործվելու աղբի հետ կխառնվի ու կկորչի. յեթե զրանից հետո կերակրենք քուսպով, վորը, ընդհակառակն, սպիտակուցով շատ հարուստ ե, այս դեպքում ել սպիտակուցի ավելցուկը չի մարսվի ու դարձյալ կկորչի։ Պարզ ե, վոր կերակրելու այնպիսի կարգ պիտի սահմանել, վոր տված բոլոր կերերը կովի ստամոքսում կանոնավոր խառնուրդ կազմեն ու սննդարար նյութերն իրար լրացնելով՝ ամբողջապես մարսվեն։ Այդ ձևով տված կերն ամբողջովին կոդտագործվի և վոչինչ իզուր չի կորչի։ Մենք կանոնավոր ենք համարում կերակրելու հետեւյալ կարգը. առաջ պետք ե տալ կոշտ կեր, վորը միանգամբից չի մարսվում, այլ նախ առաջին ստամոքսում փափկում ե, հետո կովը հետ ե բերում, նորից ծամում— վորոնում, կուլ տալիս, վորից հետո միայն սկսվում ե իսկական մարսողությունը։ Յեթե զրանից առաջ անասուններին ուժեղ կեր տանք,

կխառնվի փափկացած կոշտ կերի հետ և կանոնավոր ու լավ խառնուրդ կկազմի։

Յեթե ուժեղ կերը ջրի հետ խառնած տանք, այն դեպքում այդ վիճակում, առանց կովի առաջին ստամոքսը մանելու և կոշտ կերի հետ խառնվելու, փորպես ջրալի կեր, ուղղակի կանցնի 4-րդ ստամոքսը։ Դրա համար ել խորհուրդ են տալիս ուժեղ կերը չոր ձևով տար կամ թե՛ վորպեսզի ալյուրն ու թեփը չփոշիանան՝ մի քիչ ջուր ցրամել, կամ ավելի լավ և ջրով նամ տված դարմանի հետ խառնել։

Դարմանը տալուց առաջ, լավ և աղաջրով քիչ ցրցամել։ Արժատապտուղները շատ ջուր ին պարունակում, դրա համար ել շատ ոգտակար և դարմանից հետո անմիջապես դրանցով կերակրել, վորպեսզի ստամոքսում դարմանի փափկելուն նպաստեն։

Անասունների համար վորոնալը շատ կարեվոր գործողություն ե, այդ պատճառով ժամանակ պիտի տալ նրանց վուշ միայն կեր ոտելու, այլ յեվ հանգստի ու վորոնալու համար։ Շարունակ անհանգստություն պատճառելը, աղմըկելն ու գոմում անտեղի անցուդարձ անեն աղդում մըկելն ու գոմում անտեղի անցուդարձ անեն աղդում են կովի կաթնատվության վրա։ Անասուններին որպական է անգամ լավ կերակրելը միանգաւայն բավական ե. մընացած ժամանակը չպետք ե անհանգստացնել, բացի կթելու և ջուր տալու անխուսափելի դեպքերից։ Յեթե տընտեսության մեջ արմատապուղներ շատ կան, յերբորդ անգամը կարելի յե միայն նրանցով կերակրել։

Խմբական կերակրում։ Մեր կազմած հաշիվներից կարելի յե այն տպագորությունն ստանալ, թե ամեն մի կովի համար առանձին կերաբաժին պիտի կազմել ու առանձին ել կերակրել։ 1-2 կով ունեցող գյուղացին, ի հարկե, այդպես ել պիտի վարվի, բայց ամբողջ նախիք ունեցող անտեսատերն ակամայից կմտածի, թե՝ «բան ու գործ թողած» կարելի յե ամեն մի կովի համար առանձին հաշվի կազմել ու ջոկ-ջոկ ել կերակրել։

Միանգամայն ճիշտ ե. գործնականում նման դեպքերում ամեն մի կովի համար առանձին հաշիվ չեն կազմում, այլ գործը հեշտացնում են նրանով, վոր ամբողջ նախիրը բաժանում են մի քանի խմբերի, այն եւ ամենակաթնառատ կովերից կազմում են մի խումբ, միջակ կաթնատվություն ունեցողներից՝ յերկրորդ, ավելի կաթնապահաս կովերից՝ յերրորդ և ցամաքածներից՝ չորրորդ խմբերը: Ամեն մի խմբի կովերի համար կերաբաժնին են կազմում ըստ նրանց կաթի միջին չափի և բոլորին միևնույն չափով կերակրում: Տերը կամ առավարածն այդպիսի դեպքերում հատուկ ուշադրություն ե դարձնում առանձնապես առատ կաթ տվող կովերի վրա և ավելի պակաս կաթ տվող կովերի կերաբաժնից վորոշ չափով ուժեղ կեր և վերցնում և տալիս կաթնառատ կովերին: Այդ մի առանձին դժվարություն չի և հեշտությամբ կարելի յեւ վարժվել:

Յենթագրենք, թե նախիրի ամենալավ կովերն որական 30-35 ֆունտ կաթ են տալիս—այդպիսիներից պիտի կազմել առանձին խումբ: Յերկրորդ խմբի մեջ կմտնեն որական 24-29 ֆունտ տվողները, յերրորդի մեջ՝ 18-23 ֆ., չորրորդի՝ 12-17 ֆ. և հինգերորդի՝ 6-11 ֆ. կաթ տվողները: Բոլոր մնացածները ցամաքածների հետ կկաղմեն վերջին խումբը: Այս որինակի մեջ ցույց տրված չափից պակաս կաթ տվող նախիրը կարելի յեւ ավելի քիչ թվով խմբերի բաժանել և ընդհակառակն, ավելի շատ կաթ տվող խմբերի թիվը ավելացնել:

Քաղաքամերձ վայրերում, վորտեղ կաթը թանգ արժե, համարյա ամեն մի կովի համար առանձին կերաբաժնին են կազմում: Կերակրելու այդ ձեր կոչվում ե «անհատական» կերակրում, այսինքն ամեն գլխին առանձին:

## 11

## ԶՈՒՐ ՏԱԼՔ

Բնական պայմաններում, անասուններն ել մարդկանց նման խմում են միայն այն ժամանակ, յերբ ծարավում են: Ծարավն իր ժամանակին և այն ել դուրեկան խմելիքով հագեցնելը շատ կարենոր ե սննդառության համար: Մեզանում անասուններին մեծ մասամբ աննպաստ պայմաններում են ջրում, տալով նրանց սառցաջուր կամ աղտաջուր, կամ թե չե ամեն անդամ քշում են դեպի հեռու գետերն ու լճակները. վերջապես ամենալավ տնտեսատերերը տալիս են ուժեղ կերերից, որինակ՝ թեփից, ալրից, յեփած ու տրորած կարտոֆիլից պատրաստած տաք խմելիք:

Անասուններին պետք ե ջրել մաքուր, դոլ ջրով: Շատ սառը ջուրն անդուրեկան ե կովի համար, վորովհետևնրան մրսեցնում ե, բացի դրանից տաքություն ե խլում նրա մարմնից ու դրանով կաթը պակասեցնում:

Մենք բացատրեցինք, վոր կենգանիների մարմնի մեջ տաքությունն առաջանում ե արյան մի մասի այրվելուց, ուստի վորքան շատ արյուն գործադրովի տաքություն առաջացնելու վրա, այնքան քիչ արյուն կմնա կաթ արտադրելու համար:

Ասածներիցս պարզ ե, վոր չպետք ե ծուլանալ և անասուններին ջրել գետերի ու ջրհորների ուսոր ջրով, այլ նախորդք պետք ե գոլացնել կամ քիչ տաք ջուր խառնել հեալ: Խմելիքը շատ տաք ել չպետք ելինի, վորովհետև դրանից հետո անասունները հեշտությամբ կարող են մրսել:

Ինչպես նախորդ գլխում ել ասացինք, շատ կարևոր է, վոր կոպիտ և ուժեղ կերերը կովի ստամոքսում միանալով՝ կանոնավոր խառնուրդ կազմեն. զրա համար անհրաժեշտ է, վոր ուժեղ կերերն ընկնեն այստեղ, վորտեղ դարձանն ու խոան են գտնվում, այսինքն՝ կովի մեծ ստամոքսըթափանը. Այդ նպատակին չենք համեմ, յեթե ուժեղ կերերը ջրալի վիճակում տանք, վորովհետեւ դյուրամարս խմելքը մեծ ստամոքսի սոսով ուղիղ կանցնի մյուս բաժանմունքները. իսկ յեթե ուժեղ կերերը չոր վիճակում տանք, որինակ՝ քուսպը ջարդած, մանրացրած՝ նրանց հատիկները ստամոքսի բերանին համելով, կոկսեն չանկուի ու զրգուել նրա պատերը. ստամոքսի մյուս բաժանմունքների բերանները կիսակեն ու կերը կընկնի թափանը, վորտեղ խոան ու գարմանն են գտնվում և խոանվելով՝ լավ կմարսվեն թե կոպիտ և թե ուժեղ կերերը.

Դրա համար ել խորհուրդ ենք տալիս ուժեղ կերը վոչ թե ջրալի, այլ չոր վիճակում տալ և ջրել մաքուր, զոլ ջրով: Կան կերեր, վոր ըստինքյան ջրով յեն, որինակ՝ չանչը, դիրաը. այդպիսի կերերը պետք են ախ ածել տաշտակի մեջ, դարմանի հետ շաղախել ապա կերակրել: Անտուններն ակամայից կոկսեն ծամել ու ամբողջ խառնուրդը միասին ուտել:

12

## ԳՈՄՆ ՈՒ ԽՆԱՄՄՔԸ

Ինչ վոր նախորդ գլխում ասացինք ջրի տաքության ստամբանի մասին, նույնը կարելի յե ասել նաև զոմի վերաբերյալ: Կենդանին վորքան շատ և մըսում, այնքան ավելի՝ յե կարիք զգում ներքին տաքության, այսինքն՝ այնքան ավելի արյուն և այրվում նրա մեջ՝ տաքություն առաջացնելու համար: Հետեապես, այդ այրված մասերի վերանորոգման համար ավելի շատ ել կեր և պահանջվում:

Մենք գիտենք, վոր ձին սառնամանիքի ժամանակ շատ և ուտում: Վորպեսպի ձին ցրտին այնպես աշխատի, ինչպես տաք ժամանակ՝ նրա կերը պետք ե ավելացնել: Ցրտից կովը կաթը պակասեցնում է, հավը դադարում ե ձու ածելուց: Դրա համար ել, ով ուզում է, վոր անասնապահությունն ոգտավետ լինի, պետք ե լավ ուշադրություն դարձնի զոմի վրա և նրա վերանորոգության համար պահանջվող թեթև ծախսերի առաջ կանգ չտոնի: Գոմի տաքությունը պետք ե լինի  $10\text{--}12^{\circ}$  և  $8^{\circ}$ -ից չպիտի իջնի:  $12\text{-ից}$  բարձր տաքությունն ելլավ չի: Կովատերն ամեն տարի զոմի ցուրտ լինելուց ավելի արժեքի կաթ ե կորցնում, ըստ այն ծախքերը, վոր կավանանցի զոմը հիմնովին վերանորոգելու համար: Կարելի յե ասել, վոր սովորական տաքության չափից պակաս յուրաքանչյուր  $1^{\circ}$ -ից կովին որական  $\frac{3}{4}$ : Գունտ կաթ պակաս ե տալիս:

Գոմը տաք պահելուց բացի, չպիտի մոռանալ, վոր կովի կյանքի ու նրա արգյունավետության համար շատ կարևոր են նաև լույսն ու մաքուր ողը:

Մեզանում, սովորաբար, կամ ամբողջ ձմեռը տափարը հանդ են ուղարկում, կամ միանգամայն անհարմար գոմերում պահում, վորոնք կամ շատ մեծ ու ցուրտ են լինում, կամ մութ ու նեղվածք, վորտեղ անասունները շանտից ել վատ պայմաններում են ապրում: Փորձը ցույց ե տվել, վոր լույսն ու մաքուր չոր ողը շատ են նպաստում կաթի առատանալուն: Այս բանը չիմացող անասնատերն իր կովերի համար մաքուր, չոր ու տաք գոռ շինելու ծախքերից խուսափելով՝ կորցնում ե որական այնքան կաթ, վորի արժեքով ամբողջ տարվա համար պահանջվող ծախքը կհոգար:

Հավ անասնատերն իր ապրանքի գոմի այնպես պիտի հարմարեցնի, վոր կովերն ազատ կարողանան շարժեվել ու նստել, նեղվածք ու մութ չլինի:

Գոմի ամեն որ պիտի լավ մաքը ել, ողը թարմացնել և ցամքարի (ուծուլք) մնացորդը փոխել: Հարց ե ծառում՝ վորն ե լավ— գոմում ամեն մի կովի համար առանձին բաժանմունք շինել ու իրարից միանգամայն բաժանելը, վոր իրար չտեսնե՞ն, թէ՛ բաց գոմում միասին պահելը. անկասկած, բաց գոմերն ավելի լավ են, վորտեղ կովերը շարունակ իրար տեսնում են, ուրախ, աշխույժ են լինում և կաթնատվությունը չեն կորցնում:

13

### ԱՄԱՌԸ ԿԵՐԱԿՐԵԼՆ ՈՒ ԱՐՈՏԱՏԵՂԻՆ

Վերջացնելով զրույցս, մի քանի խոսք ել ասենք արտատեղիների կամ տավարն ամառը պահելու մասին:

Անասուններին ամառը պահելու խնդրի վերաբերմամբ մեր անամնատերերը շատ անփույթ են. Նրանք այնպես են մտածում, թե՝ «փառք աստծո, վերջապես հասել ե այն ժամանակը, յերբ տափարի պահպանության համար կարիք չկա մտածելու և վոչ ել փող ծախսելու. մինչդեռ կարելի յե ասել, վոր ամառվա կերն անասնապահության կեն ե կազմում: Մեր սովորական արոտներում տափարը կերի կեսը կորցնում ե վազգոցի վրա, վատ ե արածում և շոգից, ճանճերից ու ծարավից նեղվածքից քիչ ժամանակ ե ունենում հանգստանալու և վորոճալու համար: Վատ արոտներից ամենալավ տեսակի անասուններն այլասերվում են և վատ սերունդ արտադրում:

Հարկավոր ե միայն փորձել արոտատեղը լափացնել և մի քիչ ել լրացուցիչ ցանովի խոտ տալ վորպեսզի համոզվենք, թե ինչպես են մեր կովերն իրենց կաթը շատացնելով և լավ սերունդ արտադրելով՝ այդ արված ծախքերը մեկը հարյուրով վերագրաբնում: Մեր գյուղացու տափարն ամբողջ ձմեռը մի կերպ կերակրվելով, նիհարած գարունքահուն ե լինում: Յեկ հենց այդ ժամանակ, յերբ նոր ծնած կովերն ուժեղացրած կերի պահանջ են զգում, մեր գյուղացին-հույսն արոտին դրած՝ կերը կտրում ե ու տափարը սոված փորով հանդ քշում: Յեկ

դրա հետեւանքն այն ե լինում, վոր անասունները համարյա ամբողջ ամառվա կերը գործադրում են իրենց նիհարած մարմինն ուղղելու և կազդուրվելու վրա, մինչդեռ գյուղական կովերի կաթն առատացնելու ամենալավ ժամանակը (գարնանը ծնելու պատճառով) ամառն ե:

Պետք ե արդյոք ամառը անասուններին տանը լրացուցիչ ուժեղ կեր տալ, — վայ միայն պետք ե, այլ և անհրաժեշտ ե: Յեթե անասունատերը գոնե մի անդամ փորձի իր կովերին ամառը կերակրել ուժեղ կերով, մանավանդ բուսպով, նա կհամազգվի, վոր դա իրեն շատ ձեռնտու լի:

Ամառը կովերին լրացուցիչ ուժեղ կեր տալու շահավետությունն ակնհայտ ե նաև հետեւալ հաշվից. յեթե ասենք թե՝ մի գեոյատինից գյուղացին ստանում ե 100 փութ վարսակ, նա այդ վարսակը կծախի փութը 70 կոպեկով և կստանա ընդամենը 70 ռուբլի յեկամուտ. իսկ յեթե այդ 100 փութը գյուղացին աղալ տա և կթաններին լրացուցիչ կերակրի, գրանից կստանա 250 փութ կաթ, վորի փութը կարմենա 70 կոպեկով վոչ պակաս, վոր կանի 175 ռուբլի:

Ժամանակ ե վերջապես հաշտվելու այն մաքի հետ, վոր կթաններին լավ կերակրելը շահավետ ե. ժամանակ և մտածելու, վոր փոխանակ մեր լերկրի քուսան ու թեփն արտահաննելու, լավ է նրանցով մեր անասուններին կերակրենք, վորովհետև նրանցից ստացված կաթից կարելի յեավելի շատ ոգուտ ստանալ քան արտահանվող քուսպից ու թեփից: Յեվ յերը մենք գանդատվում ենք, թե մեղ մոտ թեփը թանգ ե (50-80 կոպ.)<sup>o</sup> Գերմանիայի, Շվեդիայի և Դանիայի գյուղացիները մեր այդ թեփի փութը գնում են 1 ռ. 10 կոպեկով և իրենց կթաններին կերակրելով ոգուտ ստանում: Նրանք իրենց կաթը ծախում են համարյա նույն արժեքով, ինչ վոր մենք, սակայն նըրանք ամեն մի կթանից տարեկան մեզ նման 60-80 դույլ կաթ չեն ստանում, այլ 250-350 դույլ:

Տավարն ամառը լավ արոտատեղ գուրս գալով կաթը շատացնում ե և բարձր հատկության ամառվա եժան կաթ տալիս, իսկ վատ արոտատեղում, ընդհակառակն, մինչև ամառվա կեսը անասունները հազիվ իրենց գոյությունն են պահպանում. իսկ յերը խոռը մի քիչ բարձրանում ե՝ կաթն ե սկսում պակասել: Ասկած ե թե՝ «լավ արոտատեղից անասնատերը յերկու կիթ ե վերցնում», — դա ձիշտ ե մանավանդ այն գյուղացիների և անասանտերերի վերաբերմամբ, վորոնց կովերը գալնանապես են ծնում:



## Յ Ա Ն Կ

Եջ

1. Յերկու խռոք . . . . .	3
2. Ինչու քիչ կաթ ու արդյունք նն տալիս մեր կովերը . . . . .	5
3. Ի՞նչպես են վրոշում, վոր անասունները կերի պահանջ ունեն . . . . .	8
4. Ի՞նչ փոփոխություն ե կատարվում կովի մեջ նրա ցամաքած յեվ կաթնատվության ժա- մանակ . . . . .	11
5. Կերի ի՞նչ պահանջ ունի կովը զանազան ժա- մանակներում . . . . .	14
6. Կերի տեսակների տարբերությունն ըստ նրանց բաղադրության յեվ մննդարարության . . . . .	19
7. Տնտեսության մեջ ի՞նչպես գնահատել կերերն ըստ նրանց սննդարարական արժեքի . . . . .	26
8. Կերի չափերը . . . . .	30
9. Ի՞նչպես կազմել կերաբաժինը . . . . .	33
10. Կերաբաժնի որինակներ . . . . .	41
11. Կերակրելու կարգը . . . . .	46
12. Զուր տալը . . . . .	49
13. Գոմն ու խնամելը . . . . .	51
14. Ամառը կերակրելն ու արոտատեղին . . . . .	52

18. Քաղինաթզով, ու հավաբուժությունը և նրա ոգուտ- ները . . . . .	20
19. Ա. Գանելիքն. — Լավ և ոչ, քան յիլլիք (ազրո- պիես) . . . . .	20
20. Ա. Ա. Մելիք-Շահնազարյան. — Կատավատը և կանեփը . . . . .	20
21. Ա. ԼՈՒԿԱՉԵՎԻՆ. — Անդրկովկասի տնտեսական զրու- թյունը . . . . .	15
22. ՊՐԵԺ. ԱՎ. Ա. Քալվերար. — Կաթնատու կովի կերա- կրումը . . . . .	30
23. Խ. Ցերիցյան. — Կաթնադանահանության զործնական ձևանարկ, մասն առաջին (64 նկարով) . . . . .	4ո.50

## ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵԿ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ



1. Հ. Փիրումյան. — Դեմի հողերի մշակությունը
2. Ա. Բակունց. — Կարտոֆիլի մշակությունը
3. Պ. Քալվերարյան. — Գրմաղրի նշանակությունը պտ-  
րաբացման զործում
4. Ա. Ա. Մելիք-Շահնազարյան. — Գենազերչակի մշա-  
կությունը
5. Ա. Ցերիցյան. — Ինչու պետք է ցելը շուտ անել

ԴԻՄԵԼ ՑԵՆԵՎԱՅ, Հողժողկոման՝ Հրատարակության, Պետ-  
հրատի կենտրոնական յեվ զավատկան զրախա-  
նութերին, Գավճնողբաժիններին:

«Ազգային գրադարան



NL0290051



22.139

ԳԻՆՆ Ե 30 ԿՈՊ.

1  
2